

8576



(«Արարատ»ի դեկտմ. ամսատեսքի յաւելուած)

## ԷՆՏՐՈՒԹԻՒՆ


### ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

77  
150  
88

Երումն աշխարհի և ճառագայթ  
իմանալի Հոգի Սուրբ Աստուծոյ,  
ի ցնծութեան աւուր լրման ուրա-  
խութեան Յովակիմայ և Աննայ  
աղօթիւք սոցա լցո զպէտս կարեաց  
Հայաստանեայց եկեղեցւոյ. զի օրհ-  
նեսցուք զքեզ. Տէր, այժմ և յաւի-  
տեան. Շարական.

1910 թ. դեկտեմբեր 11—1911 թ. դեկտ.  
11—13.

Միաբան Ա. Էջմիածնի Յուսիկ Արքեպու.



Վ. Ա. Դ. Ա. Ռ Շ Ա. Պ Ա. Տ  
Ելեքտրաշարժ Տպարան Մայր Աթոռոյ Ա. Էջմիածնի  
1911

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐԵԱԼ ԹԵԿՆԱԺՈՒՆԵՐ

Ա. Էջմիածնի Մայր Տաճարում Համազգային ժողովը կազմուած 80 հոգեստրական և աշխարհական պատգամաւորներից 89 ձայների իրաւունքով 1911 թուի գեկտեմբերի 13-ին ընտրեց գաղտնի քուէարկութեամբ ամենայն Հայոց կաթուղիկոսութեան թեկնածուներ.

## 1. Կաթուղիկոսական Տեղակալ

Տ. ԳԵՂՐԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՈՒՐԵՆԵԱՆՑԻՆ  
եւ

## 2. Ա. Պօլսոյ նախկին պատրիարք

Տ. ԵՂԻՉԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԱԼԻՇԵԱՆԻՆ.

Ընտրութեան հետևանքը չամազգային  
ժողովը լսեց բուռն ոգեսրութեամբ և ուրա-  
խական սրտազին բացականչութեամբ:



16 դեկտեմբ. 1911

էջմիածին.

Պատրիարք Կաթուղիկոսի Տեղակալ Գէորգ արքեպիսո-

կոպոս Սուրէնեանցին

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵՒՆԻՑ այսօր ստա-

ցայ հետեւալ հեռագիրը.

« Յանձնարարում եմ Զեր, Գրաֆ, յայտնել  
ամենայն Հայոց Կաթուղիկոսի Տեղակալ Գէորգ  
արքեպիսուղութիւններին, որոնք ժողովուած են էջմիած-  
նում իմ սրուագին շնորհակալութիւնը մաղթանք-  
ների և ինձ արտայայտած զգացմանքների համար»:

Վերոյիշեալը ծանուցանում եմ Զերդ Բարձր Սրբազ-  
նութեանը յայտնելու որոց անկէ:

Գեներալ Ադիւտան Գրաֆ Վարսենցով-Դաւեկով.

Այս պատստխանն է Ս. էջմածնի Կաթու-  
ղիկոսական ընտրութեան Համագույշին ժողովի հետեւալ  
հեռագրի.

13 դեկտեմբ.

Թիֆլիս.

ՆՈՐԻՆ ՊԱՅՉԱՌԱՓԱՅԼՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԽԱՆ ՓՈԽԱՐՔԱՅ  
ԳՐԱՖ ՎՈՐՈՆՅՈՎ-ԴԱՇԿՈՎԻՆ.

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԹԱՐԱԽՈՐ ԿԱՅՍՐԻ ԿԱՄՔՈՎ

Էջմիածնում խմբուած պատգամաւորների ժողովը, որ  
բաղկացած է Ռուսաստանի, Տաճկաստանի, Պարսկաստա-  
նի, Աղումեան Եւրոպայի և Ամերիկայի Հայ Լուսաւոր-  
չական հօտի Ներկայացուցիչներից, տւարտելով ամենայն  
Հայոց ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսի գահի հա-  
մար երկու արժանաւորագոյն թեկնածուների ընտրու-  
թեան վեհ գործը, ոգեսորուած է անկեղծ սիրով գէպի  
Ս. Գրիգոր Լուսաւորչի աթոռի Վեհական ՀՈՎԱՆԱԼՈՒՅԻ,  
(աթոռի) որ գտնուում է ուսուաց սահմանում, և վերա-  
ռաքելով ջերմ աղօթքներ ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ և Սրբայ-  
ական Տանկագին կեանքի համար յարգոյաբար խնդ-

րում է Զերդ պայծառափայլութիւնից Նորին Կայսերա-  
կան Մեծուրեան սաների տակ սփռել Նրա հաւատարիմ  
Հպատակների անկեղծ հաւատարմութեան զգացմունքները  
և բոլոր պատգամաւորների կողմից ջերմ երախտագիտու-  
թեան արտայայտութիւնը՝ գէպի հայ ազգն ու եկեղեցին  
ցոյց տուած անդրդուելի հովանաւորութեան համար, այլ  
և յայտնել Նորին Կայսերական մեծուրեան ու բոլոր  
Սրբայական տան առողջութեան ու երկարակեցութեան  
համար ջերմ բարեմազթութիւններ:

Համազգային ժողովը Կովկասի Տ. Փոխարքային դեկս.

13. ին ուղղեց հիմնեալ հեռագիրը.

Թ. Ի Ֆ. Լ. Ի Զ

Նորին Պայծառափայլուրեան Կովկասի Փոխարքայ  
Գրաֆ Վորոնցով-Դաշկովին.

Պատգամաւորական ժողովը, որ խմբուած է էջմի-  
ածնում Ծայրագոյն պատրիարք Կաթուղիկոսի ընտրու-  
թեան համար և բաղկացած է 89 պատգամաւորներից,  
որոնք ժողովուել են Ռուսաստանի, Տաճկաստանի, Պար-  
սկաստանի, Եւրոպայի և Ամերիկայի գանազան անդերից,  
այսօր աւարտելով Ս. Գրիգոր Լուսաւորչի Գահի երկու  
արժանաւորագոյն թեկնածուների-Գէորգ Սուրէնեան և  
Եղիշէ Թուրեան արքեպիսկոպոսների ընտրութիւնը, մա-  
տուցանում է Զերդ Պայծառափայլութեան խորին շնոր-  
հակալութիւն առ հայ եկեղեցին և ազգը Զեր ուշադրու-  
թեան և բարեացակամութեան համար, և վեր է առա-  
քում առ Ամենաբարձրեալն ջերմ աղօթքներ Զեր թանկազին  
կեանքի երկարատևութեան համար:

Որին Նորին Պայծառափայլութիւնը պատստխանեց  
Խորին շնորհակալութիւնու եմ յայտնում՝ պատգամա-  
ւորական ժողովի անդամներին նրանց արտայայտած զգաց-  
մունքի համար, շարունակ մեծ ուշադրութեամբ և անկեղծ  
համակարգութեամբ կը վերաբերուեմ բարձրագոյն մեր խնամ-  
քին յանձնուած Կովկասեան հայերի բարի ձեռնարկու-  
թիւններին»

## ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ՎԵՀ. Տ. Մատթէոս Բ. կաթուղիկոսը 1910 թ. դեկտեմբերի 11-ին առաւօտեան հանդեաւ ի Տէր: Սինօդը օրինական և սովորական գործողութիւնները կատարեց և իւր աւագագոյն անդամ Տ. Գէորգ արքեպիսկոպոսին հրատարակեց Սինօդի նախագահող և ամենայն Հայոց Հայրապետի տեղեկալ: Հանգուցեալ Հայրապետի թագումը կատարուեց նոյն դեկտեմբերի 19-ին մեծ հանդիսով, բազմաթիւ պաշտօնական ներկայացուցիչների և հասարակութիւնների ու հաստատութիւնների պատգամաւորների ներկայութեամբ (Արարատ 1910 թ. դեկտ.):

(Գործ Սինօդի սկսուած 1910 թ. դեկտ. 31. № 161.)

Նոր հայրապետի ընտրութիւնը օրէնքով պէտք է կատարուէր 1911 թ. դեկտեմբերի 11-ից ոչ առաջ (օրէնք, Հատ. XI, I. յօդ. 1119): Սինօդը ի նկատի ունենալով, ա. որ հայրապետի ընտրութեան յապաղելը կը յապաղեցնի և ա. միւռնի օրէնութիւնը, որ պէտք է կատարուէր դեռ 1910 թուի սեպտեմբերի 12-ին, բայց խոլերայի պատճառով յետաձգուեց, իսկ վերջին մեռն օրէնութիւնը կատարուել էր 1903 թ. և ա. միւռնը կարող էր պակասել. բ. որ դեկտեմբերի 11-ը լինելով ձմեռնային ժամանակ՝ որոշ գժուարութիւններ կը յարուցանի հեռաւոր տեղերի՝ Տաճկաստանի և Պարսկաստանի պատգամաւորների ճանապարհորդութեան և թէ Մայր Աթոռումս տեղաւորեցնելու վերաբերութեամբ, 1910 թուի դեկտ. 31-ին № 3085 թըզթով ինդրեց Կովկասու Տ. Փոխարքային միջնորդել նորին կայսերական Մեծութեան թագաւոր կայսեր առաջ, արտօնելու, որ նոր հայրապետի ընտրութիւնը վաղ, այն է, 1911 թուի սեպտեմբերի 1-ին կատարուի:

Սինօդի այս դիմումին Տ. Փոխարքան, 1911 թուի փետր. 4-ին № 2386, պատասխանեց, որ ինկատի ունելով կաթուղիկոսի ընտրութեան համար օրէնքով սահմանուած տարեոր ժամանակամիջոցը, Սինօդի առաջ բերած պատճառներով հնարաւոր չի գտնում կաթուղիկոսի ընտրութեան ժամանակը կրծատելու համար միջնորդել:

Սինօդը Տ. Փոխարքայի այս ժղթից յետոյ 1911 թ. փետրվարի 16-ին օրագրով որոշում է առաջին, ամենայն Հայոց նոր հայրապետի ընտրութիւնը նշանակել այս 1911 թուի դեկտեմբերի 11-ին. Երկրորդ, կազմելով այս մասին սահմանուած ձևով ծանուցողական հրովարտակներ ուղարկել Ա. Երուսաղէմի և Կ. Պոլոյ Հայոց պատրիարքներին, և Պոլոյ ազգ, ժողովին, Տաճկաստանի Կիլիկյ Արքագան կաթուղիկոսին, Աղթամարայ կաթուղիկոսական տեղապահին, Ռուսաստանի, Տաճկաստանի և Պարսկաստանի Հայոց թեմերի առաջնորդներին, Երբորդ Ռուսաստանի թեմական առաջնորդներին ուղարկել ուղղակի, իսկ արտասահմանեաներին ուղարկել Կովկասի Փոխարքայի դիւանատունը, ինդրելով կարգադրել հասցնել ըստ պատկանելոյն. և չորրորդ, նոր կաթուղիկոսի ընտրութեան նշանակուած օրուայ մասին յայտնել Կովկասի Տ. Փոխարքային (Արարատ Մարտ 1911 թ. եր. 183—186):

Պատրաստուած ծանուցողական հրովարտակները նոյն փետրվարի 23-ին թ. 427 գրութեամբ, արտասահմանեան թեմերի ցուցակի հետ, Սինօդը ուղարկում է Տ. Փոխարքայի գիւանատունը: Այդ ցուցակով Տաճկաստան՝ պատրիարքներին, Սայ և Աղթամարայ կաթուղիկոսական տներին և առաջնորդներին ուղարկուում է ծանուցողական հրովարտակ՝ հայ թեմերի թիւը հաշուելով 47: Ատրպատականի և Հնդկա-Պարսկաստանի առաջնորդներին՝ 2 հատ: Այս մասին նոյն փետր. 25 տեղեկութիւն է տրւում և. Պոլոյ պատրիարքարանին՝ ուղարկելով Տաճկաստանի հայ թեմերի ցուցակը, Երուսաղէմի պատրիարքարանին, և Ատրպատականի ու Պարսկա-Հնդկաստանի Հայոց առաջնորդներին:

Աշխարհական ցոջանային պատութրակիների և քեմական  
պատգամաւորի ընտրութիւն:

Աշխարհական ցոջանակային պատութրակիների և թեմական պատգամաւորների ընտրութեան համար Սինօդը ուղարկում է առաջնորդներին Կովկասի Փոխարքայի հետեւու ցոջաբերականը:

### Ծրջաբերական

Անդրկովկասի Նախանձապետներին և Հայ-Լուսաւորչականեկեղեցու քեմակալ Առաջնորդներին.

ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ

### ԿԱՆՈՒՆԵՐԻ

1. Անդրկովկասի իւրաքանչիւր հայ թեմակալ առաջնորդ, ամենայն Հայոց կաթողիկոսի առաջիկայ ընտրութեան մասին Ս. Էջմիածնի Սինօդից ծանուցում ստանալուց յետոյ, տեղեկութիւն է տալիս այդ մասին իւր թեմի նահանգապետին՝ պատշաճաւոր կարգադրութիւն անելու իւր թեմից մի աշխարհական պատգամաւոր ընտրելու համար, որ պիտի մասնակցէ ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութեան:

2. Թեմակալ առաջնորդը իւր ծանուցագրի մէջ հիմնուելով թեմի բաժանման վրայ, որ նշանակուած է Հայ-Լուսաւորչական եկեղեցու հոգևոր գործոց կառավարութեան վերաբերեալ կարգադրութեան մէջ (Հատ. XI մ. I, գլ. չորրորդ, յօդ. 962, 963, 964 և 995), ցոյց է տալիս այն գաւառներն ու գաւառամասերը (ուեզդ և ուչաստոկ), ուր հոգևոր կառավարութիւններ ու գործակալութիւններ են սահմանուած և ուր Հայաստանեաց եկեղեցու անգամները, որոնք այս եկեղեցու վաղեմի սովորութեան համեմատ իրաւունք ունին աշխարհական պատգամաւորի ընտրութեան մասնակցելու, պարտաւոր են ընտրել իրենց միջից ներկայացուցիչներ:

3. Թեմակալ առաջնորդից այնպիսի ծանուցագրի ստանաւուց յետոյ նահանգապետը գաւառապետների ձեռքով պատշաճաւ-

որ կարգադրութիւններ է անում յայտարարելու հոգեու կառավարութեան կամ անմիջապէս թիմից կախումն ունեցող գործակալութեանց ստարադրեալ վայրերի Հայ-Լուսաւորչական ընակիչներին, որ նոքա մինչև որոշեալ ժամանակ ընտրեն երկ-երկու ներկայացուցիչ, որոնք յիշեալ ժամանակին պիտի գնան այն թեմի գլխաւոր քաղաքը, որին իրենք պատկանում են, և այն քաղաքի ներկայացուցիչների հետ միասին ընտրեն թեմիցը մի պատգամաւոր:

Ճամարտիւն. Թէպէտ Քութայիսի գործակալութիւնն անմիջապէս թեմական իշխանութեանը չէ ստորագրուած, բայց որովհետեւ իմերեթի և Գուրիայի Հայ-Լուսաւորչական եկեղեցիները վրաստանի թեմի մի մասն են կազմում, ուստի Թութայիսի գործակալութիւնից ևս երկու ներկայացուցիչ է ընտրուում:

4. Ներկայացուցիչ կարող են կարգուել թէ տեղացի ընտրովներից և թէ առաջնորդանիստ քաղաքի բնակիչներից, որոնք ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունին: Տեղացի բնակիչներից ընտրուած ներկայացուցիչները իրենց ձախը կարող են հաւատարմաթղթով ուրիշն յանձնել, եթէ չեն կարող առաջնորդանիստ քաղաքը գնալ:

5. Թեմի գլխաւոր քաղաքի ներկայացուցիչները ընտրելու համար ամեն մի թեմակալ առաջնորդ, նահանգապետի համաձայնութեամբ, առաջնորդանիստ քաղաքի բոլոր եկեղեցիների աւագեցներին առաջադրում է, որ նոքա եկեղեցիներում առաջիկայ կիրակի օրը յայտարարելով՝ հրաւիրեն Հայաստանեաց եկեղեցու վաղեմի սովորութեան համեմատ աշխարհական պատգամաւորի ընտրութեան մասնակցելու իրաւունք ունեցողներին՝ ներկայացուցիչները ընտրելու իրենց միջից պատգամաւոր ընտրելու համար, որ պիտի մասնակցէ ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութեանը:

Այդ ներկայացուցիչներից ընտրութիւնը կատարւում է հետեւալ եղանակով:

ա) Ամեն եկեղեցում այն անձինք, որ Հայաստանեաց եկեղեցու վաղեմի սովորութեամբ իրաւունք ունին պատգամաւորի ընտրութեան մասնակցելու, ընտրում են իրանց միջից երեք-երեք ներկայացուցիչ:

բ) Ներկայացուցիչների ընտրութիւնը պիտի կատարվի կամ եկեղեցու մէջ, ժամաստացութիւն չեղած ժամանակ, կամ եկե-

զեցու բակումը: Ըստարութիւնը պիտի աւարտուի յայտաբարութիւնից յետոյ ուժ օրուայ ընթացքում:

գ) Ներկայացնութիւնների ընտրութիւննից յետոյ կազմուում է ընտրողական թիւթ, որի մէջ պիտի նշանակուի ընտրուած ներկայացուցիչների անուններն ու ազգանուններն և ընտրողների ստորագրութիւնները.

գ) Ներկայացուցիչների ընտրութիւնն աւարտուելուց յետոյ աւագերէցները ընտրողական թիրթերը մատուցանում են իրենց թեմակալ առաջնորդներին, որոնք իրենց կողմից այդ թիրթերն ուղարկում են նահանգապետներին, իսկ եթէ նահանգապետ չկայ, գաւառապետներին:

6. Նահանգապետի կամ գաւառությունի նախընթաց համաձայնութեամբ նշանակուում է ներկայացուցիչների ժողովի ժամանակն ու տեղը առաջնորդանիստ քաղաքում:

7. Արոշուած ժամանակին բոլոր ընտրուած ներկայացուցիչները գումարուում են նշանակուած տեղում թիմի կողմից պատգամաւոր ընտրելու համար: Փողովը կանոնաւոր է համարուում, եթէ ներկայացինին ներկայացուցիչների երկու երբորդական մասը, հաշուելով այդ թուում և հաւատարմաթուղթ ունեցողներին:

8. Ներկայացուցիչները պատգամաւորի թիկնածուներ են առաջարկում քուէարկութեամբ, միայն քուէարկուողների համաձայնութեամբ:

9. Քուէարկութիւններն աւարտուելուց յետոյ ամենաշատ քուէ ստացողը կարգուում է այն թեմի պատգամաւոր, որտեղ կատարուել է ընտրութիւնը. Նրանից յետոյ աւելի ծայն ստակարդուում է կանոնիդատ՝ պատգամաւորի մահուան կամ հիշողը կարգուում է կանոնիդատ՝ պատգամաւորի մահուան դէպքութեան դէպքում նրան փօխարինելու համար:

10. Պատգամաւոր լնտրելու ժամանակ ներկայացնեցիչների ժողովում կազմ պահպանելու համար ներկայ է լինում իշխանութեան կողմից նշանակուած մի պաշտօնեայ:

11. Բոլոր թեմերից ընտրուած աշխարհական պատգամաւորները նշանակուած ժամանակին պիտի զնան Են. Եջմիածնի վանքը՝ ամենայն Հայոց Պատրիարք—Կաթողիկոսի ընտրութեանը մասնակցելու համար:

12. Այս պատգամաւորները, եթէ կաթողիկոսի ընտրութեան համար նշանակուած ժամանակին չկարողանան գնալ Ս. էջմիածնի վանքը, օրէնքով իրաւունք ունին գրով յայտնելու իրենց կարծիքները, ուղարկելով այն Ս. էջմիածնի վանքը:

Առաջքի կ. Փոխարար Կովկասի  
գեներալ Թեղդցէլստյանը ՄԻԽԱՅԻԼ

Վաւերացրել է. Գլխաւոր Կառավարութեան Պետ,  
Սենատոր, Սամս-Սեկրետար Բարոն  
Ա. ՆիկոլաՅի.

Համեմատէ բնագրին. Առենադպիր Ախողի Ս. էջմիածնի  
Յ. Յովհաննիսիս.

Այս շրջաբերականի համեմատ կտտարուել է շրջանային պատուիրակների և թեմական պատգամաւորների ընտրութիւնը Խուստատանում:

Եւրոպայի եւ Ամերիկայի հայ թէմերի մասնակցութիւնը  
կարուղիկոսական բնուրութիւններին.

Հանգուցեալ Մկրտիչ Ա. կաթուղիկոսը ի նկատի ունեցած հայերի բազմանալը Արեմ, Եւրոպայում և Ամերիկայում թուրքաց հարստահարութեան երեսից խօսափող գաղթականներով, Արեմ, Եւրոպայում և Ամերիկայում մի մի թեմ հաստատեց և առաջնորդներ էր կարգեց։ Հայրապետի մահից յետոյ Սինոդը 1907 թուին գեկտեմբերի 7-ին գիմել էր Կովկասի Տ. Փախարքային յայտնելով թէ արգելք չկայ արդեօք նրա կողմից հայրապետի մահը ծանուցանող և նորի ընտրութեանը մտանակցելու հրաւիրով հսկայալու ուղարկել Արեմանան Եւրոպայի և Ամերիկայի հայ թեմերին։

Ներքին Գործերի Նախարարութիւնը 1908 թուի  
յունվարի 20-ին № 7595 գրութեամբ մանրտմասն տե-  
ղեկութիւններ է հարցնում այդ թեմերի մասին։ Իսկ  
Սինօդը պատասխանում է նոյն տարրուայ փետր. 15-ին,  
յայտնելով՝ թէ Եւրոպայի թեմը կազմուել է 1898 թ. և  
ունի 10,000 ծխական, առաջնորդական աժոռն է Ման-  
չստրում հայ եկեղեցու մօտ։

Ամերիկայի թեմը նոյնպէս կազմուել է 1898 թ., ունի  
մոտ 40,000 ծխական. առաջնորդական աժոռոն է Աս-  
տրում, Ա. Փրկիչ եկեղեցու մօտ:

Սինօդը պատասխանի յամեցումն տեսնելով վերստին  
դիմում է Նախարարութեան 1908 թ. մայիսի 23-ին №.  
1338, և հեռագրով նոյն թուի սեպտեմբերի 22-ին և  
Օտար դաւանութեանց Դեպարտամենտից նոյն սեպտեմբերի  
24-ին ստանում է հետեւեալ պատասխանը.

«Արևմտեան Եւրոպայի և Ամերիկայի թեմերը ճանա-  
չելու խնդիրը վճռուած չլինելով, որի մասին գրագրու-  
թիւնը շարունակում է, ճանուցողական թղթեր նրանց  
չեն ուղարկուի»:

Այսպիսով կաթուղիկոսական ընտրութեան չեն մաս-  
նակցում Արևմտեան Եւրոպայի ու Ամերիկայի Հայ թե-  
մերը (Արարատ. 1908 թ. նոյեմբ. եր. 974-6):

Ամերիկայի Ազգային Կենտրօնական վարչութիւնը  
1911 թուի յուլիսի 10-ին №. տ. գիմել էր Կաթուղիկո-  
սական Տեղակալ Տ. Գեորգ. արքեպիսկոպոսին միջնորդել  
Ռուս կառավարութեան առաջ, որ Ամերիկայի Հայ թեմն  
էլ կաթուղիկոսական ընտրութեանը մասնակցութիւն ու-  
նենայ, յայտնելով որ գիմել են և Ամերիկայում եղած  
Ռուսաց գետապնին, Տեղակալ Տէր Գեորգ արքեպիսկո-  
պոսի մակագրութեամբ Սինօդը ստանալով Ամերիկայի  
Հայոց Ազգ. Կենտրօնական վարչութեան գրութիւնը, նոյն  
յուլիսի 29-ին № 1868 գիմեց Կովկասի Տ. Փոխարքային  
Խնդրելով միջնորդել Ռուս Կայսերական կառավարութեան  
առաջ որ Եւրոպայի և Ամերիկայի Հայ թեմերին էլ, որոնք  
անմիջապէս ենթարկում են Եջմիածնի ամենայն Հայոց  
հայրապետին, իրաւունք տրուի իրանց հոգեուրական և աշ-  
խարհական պատգամաւորների միջոցով մասնակցել կա-  
թուղիկոսական ընտրութեանը»:

Սեպտեմբերի 20-ին կաթուղիկոսական Տեղակալ Տ.  
Գեորգ արքեպիսկոպոսը ստացաւ Ներքին Գործոց նախարա-  
րութեան այլագաւան գերարտամենտի դիրքետոր Խա-  
չուղինից հետեւեալ հեռագիրը.

«Փոխարքային յայտնուած է, որ արգելք չկայ Արև-  
մտեան Եւրոպայի և Ամերիկայի Հայ թեմերին Ծայրագոյն  
Պատրիարք կաթուղիկոսի ընտրութեանը մասնակցելու:  
Բարեհաճեցէք ուղարկել ձանուցողական հրովարտակները  
Փոխարքայի ձեռքով։ Այս տեղեկութիւնը հաղորդում է  
և Փոխարքայի դիւտանատունը նոյն սեպտեմբերի 27-ին։

Ըստ այսմ Սինօդը սեպտեմբերի 23-ին, օրագրով որոշ-  
շում է։

«Ուղարկելով Եւրոպայի և Ամերիկայի Հայոց առաջ-  
նորդների անունով ձանուցողական հրովարտակներ ի Տէր  
Հանգուցեալ Մատթէոս Բ. կաթուղիկոսի մահուան մա-  
սնին և ընտրական կանոններից մի մի օրինակ, հրաւիրել  
նոցա մասնակցելու, օրէնքի համաձայն, առաջիկայ կաթու-  
ղիկոսական ընտրութեան և ընտրել տալու նոյն նպատա-  
կով մի մի աշխարհական պատգամաւոր ամէն մի թեմից  
Յիշեալ հրովարտակներն ուղարկել Կովկասի Տ. Փոխար-  
քայի ձեռքով, համաձայն Հոգեոր Գործոց Դեպարտա-  
մենտի վերատեսչի հեռագրի։»

Այս մասին առանձին № № 2278 և 2279 գրութիւն-  
ներով նոյն սեպտեմբերի 27-ին յայտնուեց Եւրոպայի և  
Ամերիկայի առաջնորդներին։

Ներքին Գործ. Նախարարի նար ցուցումն կարուղիկոսա-  
կան ընտրութիւնների կարգերի վերաբերութեամբ.

Ներքին Գործերի Նախարարութիւնը հսկակեմբերի  
7-ին № 9005, Սինօդի պրօկուրօրի հարցերին պատասխա-  
նելով կաթուղիկոսական ընտրութեան առիթով առաջա-  
գութում է։

1. Յիշեալ նպատակով եջմիածնին եկած պատգամաւոր-  
ների լիազօրութիւնների վերատուգութիւնը կարող է կատա-  
րել ընտրական ժողովը, բայց տարակուսութեան գէպօւմ  
իրաւունք վերապահելով, բաղութելու եջմիածնի Հայ լուսաւոր-  
չական Սինօդին, որի վճիռները այս կարգի գործերի համար  
պէտք է համացուեն վախճանական։

2. Որովհետև թեմերի ժամանակաւոր կառավարիչները անտարակոյս Այլագաւանների օրինաց Հաւաքածոյի 1120 յօդուածի համեմատ նոյն թեմերի առաջնորդներն են հանդիսանում քանի որ եպիսկոպոսական այդ աթոռները բռնուած չեն վերջնականապէս արքեպիսկոպոսական աստիճան ունեցող անձինքներով, (Այլագ. Օր. Հաւաք. յօդ. 1169 և շար.), ուրեմն յիշեալ 1120 յօդ. համեմատ՝ անվիճելի կերպով թեմ. ժամանակաւոր կառավարիչներին է մնում իրաւունքը այս նպատակով ուղարկելու ընտրութեանը իրանց նշանակած հոգեոր պատգամաւորներին:

3. Թեմական առաջնորդները կարող են կաթողիկոսի ընտրութեան համար իրանց կողմից առանձին իրազօնների փոխանակ գրաւոր կարծիք ուղարկել իրանց ընտրելի թեկնածուների մասին. թեմական առաջնորդների այս իրաւունքի համար արգէն ցուցմունք կայ Կախարաբութեանը ուղարկած ընտրական հրովարտակների մէջ:

4. Պատգամաւորները չեն կարող ճնշուել յօդուաթիրանց թեմական առաջնորդի ձայն տալիս, որովհետև նրանց իրաւունքը այս գէպըում չէ սահմանափակուած ոչ օրէնքով և ոչ կաթողիկոսական ընտրութեան 1843 թուի կանոններով:

5. Ի գէպս, Եթէ Սինօգի անգամների թիւը պակաս լինի, թուի լրացնելը ամբողջովին կախուած է Կաթողիկոսական Տեղակալի համապատասխան առաջարկութիւնից (Այլագ. Օր. Հաւաք. յօդ. 1140): Անկասկած, ընտրութիւններին կը մասնակցեն միայն արդի Դ անդամները:

6. Ընտրութեան ներկայ եղող պատգամաւորները չեն կարող հրաժարուել ձայն տալուց թէ չորս աւագ թեկնածուների և թէ այդ յիշուած չորսից երկու ընտրելիների քուէարկութեան ժամանակ, ի նկատի ունելով 1843 թուի ընտրութեան-կանոնների § 19 որոշ ցուցումը, որի զօրութեամբ աշդաւում են ձայն տալուց միայն այն պատգամաւորները, որոնք ծանը հիւանդութեան պատճառով ըսլորովին անկարող են յայտնել իրանց կարձիքը:

7. Կաթողիկոսական ընտրութեան մասնակցող, թէ իսկապէս ընտրական իրաւունքով կոչուած և թէ թեմական առաջնորդներից նշանակուած (Այլագ. Օր. Հաւաք. յօդ. յօդ. 1120) պատգամաւորները կարող են ունենալ միայն իրանց մի ձայնը. Մի քանի առաջնորդների միայն մի հոգեռորական անձին յանձնարարելը զանազան թեմերի կողմից ներկայացուցիչ հանդիսանալ, չի կարող օրինական ոյժ ունենալ. որովհետև նոյն հոգեռոր անձը ենթարկուած չլինելով ըստ օրինի

թեմերի առաջնորդներին, որոնց բազկացութեան մէջ ինքն չեղանակուածի կարող է միայն իւր թեմական առաջնորդի շահերե ներկայացուցիչը լինել, առաջնորդի, որ Այլագ. Օր. Հաւաք. ներկայացուցիչը լինել է աղջուածիկ պատգամաւորները, որոնք յացուցիչ նոյնալիք և աշխատիկ պատգամաւորները, որոնք յացուցիչ լինել այն թեմերի ծուխելից, չեն կարող ներկայացուցիչը լինել այն թեմերի, որի մէջ նրանք չեն համարուած: Վելջապէս 8. Չորս աւագ թեկնածուներից քուէարկուող թեկնածուն կարող է մասնացել, որովհետև 1843 թուի կանոնների 26 յօմանակ մասնակցել, որովհետև առաջնորդ է, որ ձայն չունի միայն այն թեկնածուն, որին ընտրուած են:

Առաջազդում եմ Զեզ, ողորմած պարոն, ղեկավարուել այս ցուցմունքներով պատբխարք կաթողիկոսի առաջիկայ ընտրութեան ժամանակ: Ներքին Գործերի նախարարի տեղ՝ նախարարի Խորհրդի անդամ Մորոզով. գերեկտօք. ԲԱՐՁՐԱԳՈՅՆ Դրան Հոփմէյստրի պաշտօնով՝ Ա. Խարուղին:

Սինօգը պ. Նախարարի այս ցուցումների գործառութեան գժուալութիւնները նախատեսելով՝ տարույթ գոկեմբերի 26-ին № 2492, գրում է Տ. Փոխարքային.

«Ներքին գործերի պ. Նախարարը այս հոկտեմբերի 7-ին Հայ-Լուսաւորչական Սինօգի պրօկուրօրի անսունով ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութեան կարգի վերաբերութեամբ մի քանի ցուցումներ է արել.

Պրօկուրօրի հարցին, թէ ընտրութիւններին ներկայ եղող հոգեռորական պատգամաւորը, որ և պաշտօնէ ունի ընտրողի ընտրութեան մասնակցող, թէ իսկապէս ընտրական իրաւունքով կոչուածները, և թէ թեմական առաջնորդներից նշանակուած է (1120), կարող է ունենալով իւր մի ձայնը, ունենալ և գրա հետ իրանց իրազօնող (ըստ 1120 յօդ.) բոլոր ուրիշների ձայները»:

Ներքին գործերի պ. Նախարարը իւր յիշեալ առաջառութեան 7-րդ կէտում բացարարում է. «Պատբխարքի ընտրութեան մասնակցող, թէ իսկապէս ընտրական իրաւունքով կոչուածները, և թէ թեմական առաջնորդներից նշանակուած պ. Այլագ. Օր. Հաւաք. յօդ. 1120) պատգամաւորները կարող են օգտուել միմիւյն իրանց ձայնով: Մի քանի թեմական առաջնորդների յանձնարարութիւնը մի և նոյն հոգեռորական անձին, զանազան թեմերի կողմից ներկայացուցիչ լինել, չի կարող օրինական ոյժ ունենալ. որովհետև նոյն հոգեռոր անձը ենթարկուած չլինելով ըստ օրինի

անձը, որ չի հնմտակւում, բռտ օրինի, այն թեմերի առաջնորդներին, որոնց թեմերի կազմի մէջ չի մտնում, կարող է միայն իւր թեմական առաջնորդի շահեւի ներկայացուցիչը լինել, առաջնորդի, որ Այլագ. Օր. Հաւաք. առաջ ըերած 1120 յօդուածի ճիշդ մաքին համաձայն, ուղարկում է նրան եջմիածնի վերև ցոյց տուած նպատակով, որպէս իւր ներկայացուցիչ: Նոյնպէս և աշխարհիկ պատգամաւորները, որոնք ընտրում են նոյն թեմի ծխերից, չեն կարող ներկայացուցիչը լինել այն թեմերի, որոնց չեն վերաբերում»:

Եջմիածնի Սինօդը ներքին Գործերի պ. նախարարի բացատրութեան դէմ չի առարկում, թէ պատգամաւորները կարող են միայն իրանց մի ձայնից օդուել: Բայց եթէ ներքին Գործերի պ. նախարարի առաջարկութեան մէջ ըերած կէտե երկրորդ մասի միտքը կապ ունի այն բանի հետ, որ հոգեութական պատգամաւոր կարող է լինել կամ թեմական առաջնորդ կամ իւր թեմի հոգեութական անձերից մէկը, այսինքն իւր իսկ սոորտագրեալներից, իսկ աշխարհիկ պատգամաւորը պէտք է ընտրուած լինի միայն նոյն թեմի ծխականների թուից, իսկ այդ բացատրութեամբ վիտիւում է պատգամաւոր նշանակելու կարգը, որ պահպանում է ամենայն Հայոց կաթուղիոսի ընտրութեան ժամանակ 1843 թուի կանոնների հրատացակութեան օրից սկսած: Միւս կողմից, ներքին Գործերի, պ. նախարարի ներմուծած կարգը օրէնքով ևս որ և է հիմք չունի: Որպէս Այլագ. Օր. Հաւաք. հատ. XI, մատն I. յօդ. 1120, թոյլ է տալիս թեմական առաջնորդին ներկայացուցիչ կարգել «հոգեութական անձերից և նրան, որին ինքը դրա համար կուղենայ»: Նոյնպէս և աշխարհիկ պատգամաւորը, օրէնքի նոյն յօդուածով ընտրում է բոլոր մելիքներից, եւկեաշներից և հայլուատուոքական եկեղեցու այլ անդամներից, «որոնք կարող են առ այդ իրաւունք ունենալ այդ եկեղեցու հին սովորութեան համեմատ»:

Այսպէս, չէ սահմանափակուած այն անձերի շըջանը, որոնց թուից պէտք է նշանակուի թեմական առաջնորդի ներկայացուցիչը, կամ ընտրուի նոյն թեմի աշխարհական պատգամաւորը:

Առաջբերուած 1120 յօդուածով սահմանուած կարգը դորձնականապէս, ինչպէս յայտնի է, մինչև այժմ ոչ մը թիւրիմացութիւն առաջ չի բերել:

Բացի սրանից Սինօդը կարծում է, որ անհրաժեշտ է ունենալ նկատի, թէ ներքին Գործերի նախարարի նախարարին պատգամաւոր նշանակելու նոր կարգի կիրառութիւնը ամե-

նայն Հայոց կաթուղիկոսի առաջիկայ ընտրութիւնների ժամանակ, կարող է լուրջ բարգութիւններ առաջ բերել հետեւեալ պատճառներով: Մինչև ընտրութիւնները (11 գեկտ. տարւոյս) այնքան սակաւ ժամանակ է մնացել, որ համարեա անհնարին է ծանուցանել կայսերութեան սահմաններից դուրս եղած բոլոր թեմերին, որոնք մտամբ արգէն ընտրել են իրանց պատգամաւորները, այնպէս հաշուելով՝ որ թեմերը կարողանան ժամանակին ընտրել և ուղարկել իրանց ծխականների թուից պատգամաւորները, յէտ այնորիկ, անկասկած է, որ ձմեռնային ժամանակին ու ճանապարհների անյարմարութիւնները լուրջ արգելքներ կը գառնան պատգամաւորներին Թուրքիայի Փոքը Ասիական հեռաւոր գաւառներից եջմիածնի համնելուն:

Նոյնպէս և շիոթ պատերազմական ժամանակը, որ ընկունակ է Թուրքիայի բոլոր ընակիցների մէջ յուզուած տրամադրութիւն զարթեցնել մանաւանդ գիպի քը իստոննեայ տրաբը, հաւանօքն, ոչ սակաւ կազզի Թուրքիայի հպատակ հայերին վճռել-ուղարկել իրանց պատգամաւորներին»:

«Ի նկատի ունելով վերև յէշուածները Եջմիածնի հայլուսաւորչական Սինօդը պատիւ ունի խնդրել Զերդ Պայծառավագիւթիւնից, ընկունելով, որ ներքին Գործոց նախասահե առաջարկութեան Ղ Ր Կ Է ապահով թէ կարելի լինի և կիր արկանել ամենայն Հայոց պատրիարք կաթուղիկոսի առաջիկայ ընտրութեան ժամանակ, ներքին գործների նախարարի համաձայնութեան գալով՝ թոյլ տալ այժմեան ընտրութիւններն են կատարել նախորդ ընտրութիւնների, գործնականապէս նուիրագործուած, կարգով, որ ցայսօր տարակուութիւններ չե առաջացըել»:

8. Փոխարքայի միջնորդութեանը հետեւում է հետեւեալ կարգագրութիւնը, որ Հոգեոր Դեպարտամենտի դիրեկտոր Խարուղինը նոյեմբերի 15-ին հեռագրում է Սինօդին:

«Որովհետեւ մինչև կաթուղիկոսի ընտրութիւնները սակաւ ժամանակ է մնում, ներքին Պասճերի նախարարութիւնը արգելու չի դանում թոյլ տալու, որ այժմեան ընտրութիւններին մասնակցեն բոլոր հոգեութական և աշխարհական պատգամաւորները. թէ ունենային նրանք մի քանի թեմերի լիազօրութիւն, կամ ներկայացուցիչ լինելուն այն թեմերին՝ որոնց իրանք չեն կատարեած: Դրա համար էլ հոկտեմբերի 7-ին № 9005 առաջբերութեան Ղ Ր Կ Է ապահով պէտք չէ և կիր արկանել»:



Թէ ովեր չեն կառող ընտրութեան համար պատգամաւոր  
լինել:

Ներքին Գործոց Խախարաբութիւնը Հոգեու գործերի  
Դեպարտամենտից նոյեմբերի 3-ին № 9916. գրում է ել-  
միաձնի Սիսօդի պրոկուրօրին.

Պարտը եմ համարում կցել, թէ կաթուզիկոսի ընտառութեանը չեն կարող մատնակցել, Պետական Դումայի ընտրութիւնների համար 1907 թ. հրատարակուած Օրէնքը Ի. համ. II մասն 228 յօդուածի 1, 2, 3, 4, 5, 6 և 7 կէտերում թուածանձինք:

Յիշածնելոս առաջադրում եմ Զեկ, ողորմած պարոն, և զեւկավարութեւն պատրիարք կաթուղիկոսի առաջիկայ ընտրութեւննելի ժամանակ։ Ներքին Գործերի Նախարարի փոխանակ, Նախարարի խորհրդի անդամ՝ Մորոզով։ Դիրեկտոր, ԲԱՌՀ-ընդհանուր Գրանցական Հոգբենագործի պաշտօնով, Ա. Խարուղին։

Նորադարձների իրաւունքը եկեղեցական թէ ծխական եւ  
թէ կաթողիկոսական ընտրութիւններին մասնակցելու  
ուսիս ընտրող և ընտրելի.

Բեռնաբարիայի և Նոր Նախիջևանի հայոց կոնսիստու-  
րիան հրահանդութիւն էր ինդքտել հայ գաւանդութիւն  
ընդունած օտարազգիների մասին թէ նրանք կարող են  
ընտրութիւններին մասնակցել որպէս ընտրող և ընտրելի։  
Սինօդը սեպտեմբերի 23-ին № 2258 գրում է,

... Սինօգիս կառավարչական Մասը յայտնում է կօնսսիստորիայիդ, թէ մեր գաւանութիւնը ընդունած ուղղափառներին ու Հրէաններին առհասարակ ծիսական ժողովներում և մասնաւորապէս կաթողիկոսական ընտրութեանը վերաբերեալ ժողովներում ընտրելու և ընտրուելու իրաւունք տալու խնդրում պէտք է առաջնորդուել՝ առաջին դէպրում ծխ. կանանագրութեան 2, 4, 5 7, 9, և 10 յօդուածներով, իսկ երկրորդ գէպրում՝ այս տարրուայ ապրելի 25-ին № 290 շրջաբերականով, համարելով վեցամսեայ և երկամեայ ժամանակամիջոցները այդնախկին ուղղափառների և Հրէադաւանների մեր եկեղեցու ծոցը մտնելու օրից։

Ավել կարող են Կաթողիկոսութեան բնիքի լինել.

Ներքին Գործերի նախարարութեան Հոգեւ գործերի  
Դեպարտամենտը մայիսի 4-ին № 418. գրում է Սինօդի  
պրոկուրորին,

«Հօգեսոր Գործերի Դեպարտամենտին ուղղած Զեր  
Դերազանցութեան ապրելի 17-ի № 123 դրութեան բո-  
վանդակութիւնը զեկուցուեց այ, Նախարարին, և  
Նօրին Բարձր Դեպարտամենտինը հաճելի եղաւ յանդել  
հետեւել եղակացնեման.

Թէկ օտարագուանների կանոնադրութեան մէջ ցուցամունք չկայ, որ կաթուղիկոսութեան թեկնածու ընտրուածնիրը պէտք է լինեն միայն հոգևորականներ, ուակայն այդ լուսութիւնը, անկասկած, չպէտք է բացատրուի այն մռըսվ,

թէ ուրեմն աշխարհական անձեր ևս կարող են ըտրուել։ Պատրիարք-կաթուղիկոսի բարձր աստիճանը ինքն ըստ ինքեան պահանջում է, որ տուեալ անձը կանխագոյն երկար ժամանակեայ պատրաստութեամբ սերտ կապուած լինի եկեղեցու որպէս քրիստոնէական հաստատութեան հետ։ Այսպիսի միութիւնը ձեռք է բերում երկարամեայ արիան որբազնագործ պաշտօնէութեամբ։ Այդ պատճառով էլ երբ օրէնքը չի շեշտում թէ կաթուղիկոսը պէտք է ընտրուի յատկապէս հոգեորականներից, պէտք է հասկացուի այն մտքով, որ մի շատ բնական բանի համար կարիք չէ եղել առանձին ցուցմունքի։

Եետ այսորիկ, գաւանալով այն բանին, թէ հոգեռական անձերի որ գասակարգից կարող են լինել կաթուղիկոսութեան համար ընտրելի թեկնածուները, անշուշտ պէտք է ի նկատի ունենալ, որ բնական թեկնածու կարող են լինել, պատրիարքի բարձր դիրքը պահպանելու նկատումով, միայն այն անձերը, որոնք իրանց երկարամեայ ծառայութիւնների շնորհիւ հասել են նուիրապետութեան բարձր աստիճաններին։ Ուստի և այն ցուցմունքը որը բարձրաստիճան հոգեորականների վերաբերութեամբ բոլորին որոշ ձեռք յայտնուած է կաթուղիկոսուկան ընտրութեան համար սահմանուած 1843 թ. յունվարի 5-ի կանոններում (յօդ. 21, նոյնպէս և 15 և 17) պէտք է համարել ուղիղ։

Ինչ վերաբերում է այն հարցին, թէ հայ լուսաւորչական եկեղեցու հոգեռորականներից որոնց պէտք է համարել բարձրաստիճան հոգեորականներ (ըսունակե), թէ եայլադաւանների կանոնադրութեան 1169 յօդուածը նոյն օւինագրքի 1170 և 1208 յօդուածներին զուգադրելով ցոյց է տալիս, որ բարձրաստիճան հոգեռորական կոչւում են միայն արքեպիսկոպոսական աստիճան ունեցողները, սական որովհետեւ քրիստոնէական եկեղեցում կայ եռակարգ նուիրապետութիւն, և արքեպիսկոպոսը պատկանում է եպիսկոպոսական կարգին, ուրեմն ակներկ է, որ բարձրաստիճան հոգեռորական կոչման տակ պէտք է հասկանալ բոլոր եպիսկոպոսներին։

Այս առաջ բերածները ի նկատի ունենալով պ. նախարարը բարեհաճեց համարել, որ պատրիարքական գահի համար որպէս թեկնածու այնպիսի անձերի ընտրութիւնը, որոնք արքեպիսկոպոսական կամ եպիսկոպոսական աստիճան չունեն, մասնաւանդ որոնք աշխարհական կոչումից են, որպէս օրինական հիմք չունեցող գործ, ոչ մի կերպով չի կարող ընդունելի լինել։

Նորին Բարձր Գերազանցութեան պատառէրին համեմատ Դեպարտամենտը այս մասին պարտք է համարում յայտնել Զերդ Գերազանցութեան տեղեկութեան և հրահանգութեան համար։

Ընտական ժողովները կատարելու արտօնութիւն։

Տ. Փոխարքան նորմերի 18-ին № 24,306. դրում է Սինօդին։

Ամենայն Հայոց Ծայբագոյն պատվիաը կաթուղիկոսի թեկնածուների ընտրութեւնները կատարելու համար նշանակած գեկտեմբերի 11-ը ժողոված լինելով, առաջագրում եմ Սինօդիդ, այդ օրը բանալ ժողովը և ձեռնապրել ընտրութեւններին պահպանելով այն կարգը, որը սահմանուած է առանձին կանոններով և որը Անդր-Կովկասի կառավարչապետ գեներալ-ագեւտանդ նեյդգարդը 1843 թ. հաստատել էր և ես 1908 թուին փոփոխել եմ։

Յիշեալ կանոնների մեջ օրինակը ուղարկելով զեկավարուելու համար՝ յաւելացնում որ, որպէս Բարձր կառավարութեան կողմէց ներկայացուցիչ պատրիարք-կաթուղիկոսի ընտրութեւններին ներկայ կը լինե երեանի նահանգապետ, Բարձրագոյն Գրան Հոփմէյստը, գրաֆ Տիգենհաուզէն։

Ամենայն Հայոց Կարուղիկոսի ընտրութեան կարգը.

### Կ Ա Ռ Ո ՞ Թ

Ի ՀՐԱՀԱՆԳՈՒԹԻՒՆ ՅՀՆՏՐՈՒԹԵԱՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ  
ԵՒ ԿԱՐՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ, ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի Տ. ՓՈ-  
ԽԱՐՔԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒԻ Ի ԳԵՆԵՐԱԼ-ԱԴԻԻՏԱՅՆՏ ԿՈՄՄ ՎՈ-  
ՐՈՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎԻ ՅԱՄԻ 1908.

### Գ Լ Ո Ւ Թ Ա.

Յաղագու անձանց, որք մասնակցին լրելութեան Ծայրա-  
գոյն Պատրիարքի եւ Կարուղիկոսի:

Յօդ. 1. Ըստ 13-րդ յօդգւածոյ ԲԵ. ՅԶԲՈ. Գ. 03 հ հաստատեալ  
Օրէնսդրութեան ի 11-ն մարտի 1836 ամի՞ յաղագու կառավա-  
րութեան դորժոց Հայաստանեայց Եկեղեցւոյ ի Յուլաստան,  
ընտրութիւն Ծայրագոյն Պատրիարքի և Կաթուղիկոսի լինե  
ընդ ձեռն պատգամաւորաց տուաբելոց յեւրաբանչեւը վեճա-  
կաց երկու երկու, հոգեուրական և աշխարհական: Եկեղեցական  
պատգամաւոր պարագի լինել կամ ինքն թեմակալ Յ. ո. աշնորդն  
կամ Եկեղեցական ոք, զոր կարգեցէ նաև իսկ աշխարհական  
պատգամաւորն ընտրի յամենայն պատուաւորաց Հայոց, և  
մելքաց, և հարիւրապետաց և յայլոց յարգելի աշխարհական  
անդամոց Հայաստանեայց Եկեղեցւոյ՝ որ ունին իրաւունս  
ընտրելոյ ըստ վաղեմի սովորութեան այսը Եկեղեցւոյ:

Յօդ. 2. Յյոնքիկ ընտրեալ պատգամաւորը Եթէ ոչ կա-  
շացնեն գալ անձամբ և Ս. Եջմիածինի մինչ ցահմանեալ ժամա-  
նակն ընտրութեան Պատրիարքի, ունին իրաւունս դրաւոք  
յայտնել զիարեծիս իրենանց և հասուցանել զայն ի Սինօդն Ս.  
Եջմիածին:

Յօդ. 3. Յաց ի պատգամաւորաց մասնակցին ընտրու-  
թեան Պատրիարքի ամենայն անդամք Սինօդի ո. Եջմիածինի և  
եօթն եպիսկոպոսունք յերիցագունիցն, որը ի ժամանակին  
յայնմիկ Եղեցին ի ո. Եջմիածին, իսկ առ և չգոյէ այնը թուոց  
Եպիսկոպոսաց, լրացցի այն յաւագագոյն վարդապետաց  
անդամոյն:

Յօդ. 4. Պրոկուրորն Սինօդի ո. Եջմիածինի պարտի ներկայ  
լինել ի ժամ ընտրութեան Ծայրագոյն Պատրիարքին ո. Եջ-  
միածինի յաղագու հոկելոյ կարգին և բացատրելոյ զիանոնս  
ընտրութեան ի գէպս ծագելոյ որոց և իցէ երկբայութեանց  
ըստ այսմ առարկայի (Օրէնսդրութիւն յաղագու կառավարու-  
թեան Հայաստանեայց Եկեղեցւոյ, յօդուած 46):

Ծանօթութիւն. Եթէ երկբայութիւնը այնոքիք առ-  
նուցուն զգարձուածո անպատշաճո կարգաց և բարեվայելու-  
թեան, զոր պարտ է պահել ի ժամ ընտրութեանն, յանժամ  
իրաւունք Են աւագագոյն Անդամոյ (Կատարողի պաշտաման  
Կաթուղիկոսի) թողուէ զգովակն յաջորդ աւուր, հնարո ի ձեռա-  
առնելով վասն ածելոյ ի համաձայնութիւն զժագեալ երկ-  
բայութիւնո:

Յօդ. 5. Ընտրութիւնն կատարի ի ո. Եջմիածին ի Մայր  
Տաճարի Արքոյն Գրիգորի Առ ուուորչի խոտակոյն պահպանու-  
թեամբ արտօնութեանց ուսհմանելոց ի Հայաստանեայց Եկե-  
ղեցւոյն, որք ամփոփին ի յաւագիկաց:

### Գ Լ Ո Ւ Թ Բ.

Յաղագու նախորհներաց կանոնաց, որք պարտին  
կատարի նախ զընտրութիւնն:

Յօդ. 6. Ի գալ հասանել մէն մի թեմակալ առաջնորդի,  
Տեղակալն Առենապետի Սինօդի Ս. Եջմիածինի, Աւագագոյն  
Եպիսկոպոսն Տաճարին ո. Եջմիածինի՝ առաքէ ընդ առաջնորդ  
զեպիսկոպոս մի և զերկուու վարդապետու, որը յետ քաղա-  
վար ողջունի առաջնորդին նման յորոշեալ օթեամնն: Իսկ աշ-  
խարհական պատգամաւորացն ընդ առաջ ելանէ ի Վազգարա-  
պատէն կարգեալ հիւրընկալ Եկեղեցականն, որ և ազաւանէ  
զնոտու ի սենեակի Վազգարապատէն: Հիւրընկալն արձունադրէ  
յառանձին մատենի զանուանու ամենայն պատգամաւորաց  
Ակելոց, Աշանակելով զօր ժամանեման իւրաբանչեւը ութուք:

Յօդ. 7. Յետ ժամանելոյ ամենայն պատգամաւորաց՝ հո-  
գեստականաց և աշխարհականաց, յետ ընդունելոյ զիրաւոր  
կարծիս առաքեալու ի Սինօդն և զառաջադրութիւն Տեառն  
Փոխարքային Կոլլացու վասն բացանան ժողովոյն, նոյն իսկ  
հոգեստական անձն առաջի առնէ ի Սինօդն զցուցակ Եկեալ  
պատգամաւորացն: Յայնժամ իսկ Սինօդն որոշէ զօր ընտրու-

թեան Պատրիարք-Կաթուղիկոսի և կազմեալ զօրագիր ըստ այս մառարկայի՝ զքազուածն յայնմանէ մատուցանէ Տեղակալին Առենապետի Ախոզի վասն կախեալն դնմանէ անօքնութեանց առ ի կատարել զորբազան պաշտամունս ըստ հետագային:

Յօդ. 8. Վասն գքագրութեանց ժողովոյն Սինօգն ո. Եջմանի կարգէ զԱռենապետին իւր և զերկուո Շփնականս նորա:

Գ. Լ. Ո. Ի. Խ. Գ.

Յաղագս մանրամասնութեանց թեարութեան չորից երիցագոյն թեկնածուաց եւ վասն բուհարկելոյ ի նոցունց զերկուո թեկնածուս յաստինան Ծայրագոյն Պատրիարքի:

Յօդ. 9. Նախ քան զընազութիւն երիցագոյն թեկնածուաց ի տաճարին ո. Եջմիածնի առաջի սեղանոյ Խջման Արդւոյն Միածնի դնի գրառեղան, Տաճկեալ կարմիր մահուաթի վասն ներկայ պատգամաւորաց և հոգ եռականացն ի միաբանութենէ Վանիցն ո. Եջմիածնի, և ոյլ ասանձին սեղան վասն Պրոկուրորի Սինօգի Եջմիածնի:

Յօդ. 10. Ի վերայ սեղանոյն դնին Խաչ և Աւետարան, և երկուստեք աշառնակը երկու արձաթի՝ լուցեալ նըագօր: Բայց յայսմանէ. 1, Տպագրեալ օրէնսդրութիւն յաղագո Կառավարութեան գործոց Հայտատանեաց եկեղեցւոյ ի նուռատան և կանոնը վասն ընտրութեան Ծայրագոյն Կաթուղիկոսի. 2, Հինգ ընտրապակեան թերթը՝ չորքն ըստ ձեռյն № 1 և մինչ ըստ ձեռյն № 1, որը ընդ սին: 3, Անուանական ցուցակ համայն աշխարհական պատգամաւորաց՝ որ ունին իրուունս ընտրելոյ զԾայրագոյն Կաթուղիկոսն ըստ վաղեմի սովորութեան Հայտատանեաց եկեղեցւոյ (յօդ. 13): 4, Անուանական ցուցակ ստհմանեալ թուոց հոգ եռականաց ի միաբանութենէ Վանիցն ո. Եջմիածնի և պատգամաւորաց եկելոց յընտրութիւնն. 5, Գրաւոր կարծիք պատգամաւորաց՝ որք ոչ կարեն անձամբ ներկայ լինել յընտրութեանն, 6, Անուանական ցուցակ պատգամաւորաց, որք թէպէտ և պարտ եին ներկայ լինել ի ժողովին, բայց չեն ժամանեալ անգը և ոչ առաքեալ ի Սինօգն զկարծիս իւրեանց, և վերջապէտ 7, Առաջազբութիւն 8. Փոխարքայի Կովկասու առ ի բանալ զժողովին:

Գ. Լ. Ո. Ի. Խ. Գ.

Յաղագս կարգի պարապմանց ժողովոյն.

Յօդ. 11. Ի սահմանեալ աշուրն ընտրութեան Նայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսին պատգամաւորք ժողովին յիննեւ ըորդում ժամու առաւտօնեան ի Կաթուղիկոսական վեհաբանն, ուրանոր ընդունին զնոսա Աւագագոյն եպիսկոպոսն տաճարին ո. Եջմիածնի և միւս անդամք Սինօգին: Յետ այստիկ Աւագագոյն եպիսկոպոսն հրաւելք զնոսա յեկեղեցի յունկնդրութիւն ո. պատարագի և գոհացողական մազթանաց վասն առողջութեան և երկարութեան կենաց ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ և ըոլոր ՕԳՈՍՏԱՓՅՈ ՏԱՆ, և յաղագս երդմնեցուցանելոյ զաշխարհական պատգամաւորս առ ի պահպանութիւն կարգադրութեան յառաջիկայ գործն:

Ծանօթուրին. Հոգեորականքն ոչ ածին յերգումն այնու Ենթազրութեամբ, զի պարտին նոքա ըստ պարաւուց և ըստ սրբազան աստիճանի իւրեանց պահպանել զկանոնոն զայնոսիկ:

Յօդ. 12. Մուտն ի Տաճարն կատարի այսու կարգու. յառաջ ընթանայ կատարովն պաշտման Պատրիարք Կաթուղիկոսին (Երիցագոյն Անգամ Սինօգի), ապա պատգամաւորքն Պատրիարքաց Երուսաղէմի, Ասոյ, Սղթամաբայ և Կ. Պօլոյ, զհետ նոցա երթան կարգաւ զոյդ զոյդ յաջմէ կողմանէ Անգամք Սինօգի ո. Եջմիածնի և եօթն երիցագոյն եպիսկոպոսունք տեղեւոյն՝ ուղեկցութեամբ Պրոկուրորի Սինօգի, իսկ յահեկէ թեմակալ եպիսկոպոսունք կամ պատգամաւորք նոցա կարգաւ նոյնպէս զոյդ զոյդ ըստ աւագութեան աստիճանի ձեռնազրութեան նոցա, և ապա զհետ նոցա երթան աշխարհական պատգամաւորք նովին իսկ կարգաւ ըստ աւագութեան քաղաքացն և ի վերջ գնացիցն Ատենագովին Սինօգի ո. Եջմիածնի:

Ծանօթուրին. Ի գէպս անյաջող եղանակի ոչ կատարի հանգիստուոր մաւսս այս, և պատգամաւորք ըստ հրաւելքանաց Աւագագոյն եպիսկոպոսի և պրոկուրորի Սինօգի ո. Եջմիածնի դնան ի Կաթուղիկոսարանէ յեկեղեցի առանց վերայդրեալ արարողութեանն:

Յօդ. 13. Զպատարագոյն սուրբ զգոհացողական մազթանս մասուցանէ հանգիստու Աւագագոյն եպիսկոպոս տաճարին ո.

կէմիածնե, իսկ զինի աւաբոման պատարագին և գոհացողական մազթանացն վասն երկարութեան կենաց ՆԱՐԻՆ ԿՈՅՈՒՇ ՌՈ.ԿՈ.Ն ՄԵՆԱԽԹԵԱՆ և համայն ՕԴՈՍՏ.ՓՈ.Ռ ՏՈ.ՆՆ ՆԱՐԱ, Աւագագոյն եպիսկոպոն երգմնեցուցանէ զամենայն առաջիկայ աշխարհական պատգամաւորո ըստ ոահմանեալ ձեռյն (ձե 3): Երդուեալքն ամենեքեան ստորագրեն զանուանո իւրեանց ի թղթեն երգման:

Յօդ. 14. Ի միւսում աւուր կատարման այսր ծիսի ամենայն ներկայ եղեալքն և որք ունին զիբաւունո ընաբութեան Պատրիարք Կաթուղիկոսի զտեղս կալցին շուրջ զդրասեղմանով, որ եկեալ կայ առաջի Անդանոյ Խջման Ծրգւոյն Միածնի (§ 9), ի միջավայրին Կատարողն պաշտաման Պատրիարք Կաթուղիկոսի, յաջմէ կողմանէ նորա վերոյիշեալ պատգամաւորք չորսց Պատրիարքաց և բոլոր հոգեորականք, որք ունին զիբաւունո ընտրելոց զՊատրիարք Կաթուղիկոսն ըստ աւագութեան ձեռնաւորութեան իւրեանց, իսկ ի ձախմէ կողմանէ աշխարհական պատգամաւորք ըստ աւագութեան կոչման իւրաքանչիւրոցն:

Պատրիարքին. Հոգեորական անձնով՝ որք ունին իրաւունո բազմել ի տաճարին ըստ ծիսի եկեղեցւոյն, պահպանեն զայսոսիկ իրաւունո և յայս դէպո, իսկ այլք ամենեքեան ընտրեն յոտին կացեալ:

Յօդ. 15. Նախ քան զամենայն երեցագոյնն ի բարձրաւութեամբ երկուց աւագ սարկաւութեամբ հոգեականաց գործակցութեամբ զայսոյ և ազօթո սոհմանեալս ըստ ծիսի Հայուստանեայց եկեղեցւոյ վասն աւաւըն պատշաճի, հուսկ ապա նոյն ինքն բարձրաւութեամբ հոգեորականն ասդ քարոզ ըստ պատշաճի, յորում յանդիման կացուցանելով զիսեմութեւն գործոյն՝ որոյ վասն գումարեալ են, զակաս եկեղեցւոյ և զբարօրութեւն՝ որում ակն ունի եկեղեցին յընտբութենէ արժանաւորագոյն Պլխոյ իւրոց, հրաւիրէ զֆողովն գուն զործել, ի սաց մերժելով զամենայն վնասակար աշաւութեւն, զի ընտրեալ Պլխոյ հայաստանեայց եկեղեցւոյ կարասցէ ըստ ամենայնի պահպանել զարժանաւորութեւն վեհ աստիճանին իւրոց, և առհասարակ զմաւաւ ածել, զի զընտրութենէ արժանաւորագոյն Պատրիարք Կաթուղիկոսի ամենայն Հայոց կախեալ կայ ամենայն բաշօրութեւն սոյն եկեղեցւոյ և Կաթուղիկէ Աթոռոյն ամենայն Հայոց Արքոց էջմիածնի: Հուսկ ուրեմն Պրոկուրորն Սինոգի ո. էջմիածնի ընթեռնու զառաշաղբութեւն Տեսան Պոխարքային Կալկառու վասն բացման ժողովոյն, և ժողովին ձեռն արկանէ յընսարութեւն աւագագոյն (§ 16 և հետեւ.):

Յօդ. 16. Իւրաքանչիւր ոք ի ժողովականացն տայ զկարծիս իւր վասն ընտրութեան աւագագոյն թեկնածուաց ազատօրէն, ըստ ուղիղ հասկացողութեան իւրում, ըստ մոքուր խզմի մտաց, առանց իրիք երկեւզի, և ոչ հայելով յառաջարկութեւն ինչ կողմնակի կամ ի գրութեւն մասնաւոր, թէն իցէ այն ի պատուաւորագոյն անձանց յազգէն Հայոց ամենայն ոք վարի այնպէս, զի կարծուցէ տալ պատասխանի յամենայնի առաջի Տեսան Առուութոյ: Առոտի և իւրաքանչիւր ոք ի բաց մերժելով զամենացն յամառութեւն կարծեաց և անձին՝ ջանացի տեսանել ի կարծիս հանուրց զհաստատուն հիմն ճշմարտութեան:

Յօդ. 17. Իւրաքանչիւր անդամժողովոյն զկարծիս իւր պարտի արայացտել համառօտ, պարզ, ոչ հեռանալով առհասարակ յիսկական առագկային, յանդիման առնել նախ՝ զարժանաւորութեւն բարձրաստիճան հոգեորականի առաջարկելովն յինքենէ, ապա զարացուցութեւնո և վերջապէս զակնկալեալն ենմանէ օդուտ վասն եկեղեցւոյն:

Յօդ. 18. Ի ժամ յայտնելոյ զկարծիս սկսանելով ի կրտսերագունէն և կարգաւ հասնելով առ երիցագոյն, չէ պարտութեան կամ միջամտիլ ի խօսա նոցամինչեւ է աւարտեալ նորա զիւրն առաջարկութեւն: Յայտնեալ կարծիք միանդամայն գընի ի Պրոկուրորէն և յետ պրութեանն ընթերցեալ ինին բարձրածայն և վաւերացուցանին ստորագրութեամբ անդամոյն, որ տուեալ է զկարծիս:

Յօդ. 19. Պատգամաւոր եկեալ յեջմիածնին, եթէ ի պատճուս հիւանդութեան կամ յայլոց անակնունելի գիպուածոց ոչ կարէ ներկայ լինել ի ժողովին, պարտի հասաւցանել նմին զիւրն գրաւուր կարծիս, ոչ թողլով զայն առ վաղիւն: Հնոյն պարտին կատարել և Անդամը Սինոգի ո. էջմիածնի, եթէ ոք ի նոցանէ ոչ մարթասցի ներկայ լինել ի ժողովին ըստ անակնունելի հանդամանաց: Ազատ են ի տալոյ զգբաւոր կարծիս իւրեանց այնորիկ և եթ պատգամաւորք, որք ի պատճառս ծանու հիւանդութեան իսպառ ոչ կարացյեն տալ զոր և իցէ կարծիս:

Յօդ. 20. Զայնը ամենայն անդամոց ժողովոյն այսորիկ հաւասար են միմեանց:

Յօդ. 21. Զինի հաւաքման ամենայն ձայնից ժողովոյն և հասու լինելոց զրաւոր բացարկութեանց հասելոց ի Սինողն ըստ 2 յօդ., չորեքին աւագագոյն բարձրաստիճան Հոգեորականք ըստ բարձրագութեան ձայնից տուելոց ի նպաստ նոցամացին ունողք իրաւանց լինելոյ ի թիկնածու, իսկ ի գէպո հաւասարութեան ձայնից՝ վիճակն ուսոշէ թէ ոք համարելի է աւագ:

ծանօթութիւն. Գրաւոր յայտաբարութիւնը բացակայ պատգամաւորաց պարտին ընդունել ի հաշիւ՝ հաւասար ձայնից ներկայ եղելոց յօդուտ այնը անձին, որ ի յայտաբարութիւնոն յայնոսիկ նշանակի յանուանէ:

Գլուխ ե.

Յաղագս բնուրաբեան երկար քեկնածուայ յասինան Ծայրագոյն Պատրիարք Կարուղիկոսի.

Յօդ. 22. Յերկրորդում կամ յերրորդում աւուր ի չորից վերոյդրեալ աւագագոյն թեկնածուաց անտի ըոլոր առաջիւ կայ ժողովականը ընտրեն զերկուութեկնածուու յաստիճան Ծայրագոյն Պատրիարքի:

Յօդ. 23. Ըստրութիւնն կատարի դադանի տուչութեամբ ձայնից հետագայ կարգաւ:

Յօդ. 24. Զինի Ընթեռնելոյ զալատշաճուոր ազօթու և արտասանելոյ զամասուա բան համաձայն յիշտակելոյն ի վերոյ ի § 15, վերաձայնի անուն առաջոյն ի չորից աւագագոյն թեկնածուաց:

Յօդ. 25. Ի կարգաւն զանուն թեկնածուի կատարի քուէ-արկութիւն նորա քուէիւք. իրաքանչիւր որ ի ներկայիցն, որող են իրաւունք ընտրելոյ. ընդունի զիւրն քուէ ի ձեւոց նախագահովին: Քուէատուութիւնն սկսանի ի կոտու-րագոյն անդամոյ յաշխաբական պատգամաւորաց և հասանի կարգաւ յերեցագոյնն:

ծանօթութիւն Յայտաբարութիւնը բացակայ պատ-գամաւորաց ոչ ընկալեալ լինին ի հաշիւ ձայնից, քանզի ըստ զօրութեան § 77 ԸՆԴՀԱՅՈՅՑՆ հաստատեալ ի 1836 ամի 0ըէնուրութեան յաշագու կառավարութեան գործոց Հայուստանեաց եկիզեցւոյ ի նոււսաստան՝ ընտրութիւնն պարտի լինել միմիայն ի ձեւն ներկայ եղեալ պատգա-մաւորաց:

Յօդ. 26. Թեկնածուն, զոր քուէարկեն ոչ մասնակցի քուէ-արկութեան:

Յօդ. 27. Պրոկուրոր Սինօդի զիւրագանչիւր տուեալ քուէ նշանակէ յընտրողական ցուց ոկին հանդէայ ազգամք տուցեն տուեալ է զըուէն: Յօրժամ ամենայն ներկայ անգամք տուցեն զըուէս իւրեանց, ցուցակն առաջի առնի նախագահովի ժողովոյն, որ ուրոյն ուրոյն համարկելով զըուէս զընտրողականս և զու զընտրողական՝ նշանակէ զթիւ նոցին ի պատշաճաւոր խորանս ընտրութեան ցուցակին № 2 հանդէալ անուան քուէ-արկեալ թեկնածուին:

Յօդ. 28. Յետ այսուիկ ծանուցանի ներկայ ժողովոյն թիւ ընտրող և ոչ ընտրող ձայնից, և սկսի ընտրութիւն միւս թեկ-նածուի նովին իսկ կարգաւ, և նոյնակէս մնացեալ երկուց թեկնածուաց:

Յօդ. 29. Յորժամ քուէարկ աւագագոյն Հոգեութական Անգամ ժողովոյն, որ նախագահէ ի նմին, յայնժամ աւագա-գոյնն զինի նորա յառաջեկայ հոգեութականց համարէ զձայնս, անցուցանէ զայնոսիկ ի ցուցակ և լին, որպէս ցուցեալ է ի §27:

Յօդ. 30. Զինի աւարտման արարուղութեան ընտրութեանն ի ձայն ընթերցեալ լինի ցուցակն չորից ընտրեալ թեկնածու-աց յորոց երկունեն՝ ունողք զմեծագոյն թիւ ձայնից, համա-րեալ լինին թեկնածու յաստիճան ծայրագոյն Պատրիարքի:

Յօդ. 31. Յընտրողական ցուցակի չորից աւագագոյն թեկ-նածուաց նշանակի յանդիման երկուցն ի նոցանէ, թէ նոքա ըստ առաւելութեան ձայնից՝ ի նպաստ նոցին սուելոց, ար-ժանացեալ են թեկնածութեան ի կոչումն նայրագոյն Պատ-րիարքի: Այս ընտրողական ցուցակ ստորագրի ի բոլոր անդա-մոց մասնակցելոց ժողովոյն, վաւերացուցանի ի Պրոկուրորէն և առաջարկեալ լինի ում անկ է: Պատճէն յիշեալ ցուցակի ստորագրեալ յանդամոց լինողի ո. Էջմիածնի վաւերացուց-մամբ Ատենագրի նորին, մնոյ ի դործո Սինօդի:

Յօդ. 32. Ի աց ի ստորագրեալ ցուցակին պատրաստեալ լինի առանձին օրտագիր վասն ընտրութեան նայրագոյն Պատ-րիարք Կաթուղիկոսին յերկուու օրինակու, որ ստորագրի ի բո-լոր ժողովականացն և վաւերացուցանի յԱտենագրէ Սինօդի ո. Էջմիածնի. մին յայնցանէ առաջարկի ուր անկ է, իսկ միւ-սըն մնոյ ի գործո Սինօդի:

Յօդ. 33. Յընթացո քուէոր ժամանակի պարագամանց ժողո-վոյն ատենակալութիւն լինի ի տունջեան, սկսեալ յիններագր ժամու առաւոտու մինչ յերկորդ ժամն զինի մըջօրէի, իսկ յերեկոյի ոչ լինի ատենակալութիւն:

Յօդ. 34. Յետ աւարտման ընտրութեան և ստորագրելոյ երկուց օրինակաց ընտրողական ցուցակի և առանձին օրտագրի վասն ընտրութեանն, ժողովն առաջի զպատգամաւորութիւն յերից անդամոց իւրոց զմի հոգեօրական և զերկուու աշխար-հականս առ. 8. Փոխարքայն Կովկասու վասն առնելի ի կողմա-նէ նորա անօրէնութեան՝ ըստ 1125 յօդ. Կան. Օտար Գաւան. (Ժոդ. 0ը. Տ. XI, մ. I հրատ. 1896 ամի) և 21 յօդ. 0ըէնոգր. վասն Կառագ. Կովկասու երկու (Հ. II, ըստ շարուն. 1906 ամի):

Ուղիղ է.

ի ս. Գիրեկոսորի Գիւանատան Փօխարքային Կովկասու ն. Նիկոլաս

Ստուգեաց' Գործակաւ Պ. ՊօՄՆՐՇՉԱՒՆՈՎ.

Թարգմանութիւնս այս համեմատ է բնագրին.

Ատենագրի Սինօդի ո. Էջմիածնի Յ. Պավիաննիստան

(Տ. Գործ թ. 126 1907, առաջագրութիւն Տ. Փօխարքային Կովկասու ի ֆակտ հոկտ. 1908 ամի, թ. 21887)

## ՕՐԱԿԱՐԳ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ

ԱՄԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՅ ՍՐԲԱՁՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒԴԻԿՈՂԻ

10—13 դեկտ. 1911 ամի. ի Ս. էջմիածին.

Ա.

**10 Դեկտ.** Հանգիստաւոր. հոգեհանգիստ ի Տ. հանգուցեալ ՄԱՏԹԵՈՍ Բ. Կաթուղիկոսի գերեզմանի վերայ, ներկայութեամբ բոլոր հոգեօքական և աշխարհական պատգամաւորների, Մայր Աթոռի միաբանութեան և պատուաւոր հիւրերի:

**11 Դեկտ.** 1. Կարգադրիչ Յանձնաժողովը նախապէս յայտնում է պատգամաւորներին, որ Վեհարան ժողովուին առաւօտեան ժամի 9-ին, լսելով երրորդի գանգի ձայնը:

2. Վեհարանում պիտի լինին այդ ժամին Տ. Տեղակալը, Սինօդի բոլոր անդամները, պ. Պրոկոռորը և Առենադպիրը իւր օդնականներով:

3. Տ. Տեղակալը և Հ. Հ. անդամք ընդունում են պատգամաւորներին. Տ. Տեղակալը հրաւրում է նոցա եկեղեցի ներկայ լինելու Ս. պատարագին և գոհացողական մաղթանքին: Կարգադրիչ Յանձնաժողովը ցոյց է տալիս եկեղեցի գնալու կարգը ըստ Կանոնների § 12 (առանձին կազմած):

4. Տ. Տեղակալը մատուցանում է Ս. պատարագը, որից յետոյ կատարուում է գոհաբանական մաղթանք:

5. Մաղթանքից յետոյ Տ. Տեղակալը երդմեցնում է աշխարհական պատգամաւորներին: (Առանձին փոքր սեղան իջման տեղի առաջ, կարմիր մահուղով ծածկած, վրան Ս. Խաչ և Ս. Աւետա-

րան, գրիչ, թանաք երկու հատ աթոռ): Ստորագրուած երդման թերթը յանձնուում է Սինօդի Առենադպիրին:

Բ.

**12 Դեկտ.** 1. Առաւօտեան վաղ Կարգադրիչ Յանձնաժողովը պատրաստել է տալիս պատգամաւորների տեղերը Մ. Տաճարում, իւրաքանչիւրի անունն ըստ ցուցակի գրած գնելով համապատասխան տեղում (Կանոնք, §§ 9—10): Երբորդի գանգը հնչելուս պատգամաւորները ժողովում են Վեհարան և այնուեղից իշնում են նախընթաց Յ կէտում յիշուած կարգով Մայր Տաճար, ուր գրաւում են իրանց համար նշանակուած տեղերը:

2. Տ. Տեղակալը երկու վարդապետների մասնակցութեամբ կարդում է հետևեալ աղօթքները:

ա) Օրհնեալ Տէր Մէր Յիսուս Քրիստոս, ամէն. Հայր մեր.

բ) Սաղմոս, փոխ, ձթ. «Զգործու ձեռաց մերոց ուղիղ».

շ) Վարդապետներից մէկը՝ ի մէջ տաճարիս

դ) » միւսը՝ Հովիւ քաջ, հովիւ բարի.

3. Տ. Տեղակալը պաշտօնապէս բանալով ժողովը առենադպանում է ըստ Կանոն § 15:

4. Պ. Պոկուրորը կարդում է Տ. Փոխարքայի գրութիւնը թ. 24063. իսկ այդ գրութեան թարգմանութիւնը կարդում է առենադպիրը:

5. Առենադպիրը կարդում է Եպիսկոպոսների ընդհանուր ցուցակը:

6. Կատարում է ձայնատութիւնը չորս  
թեկնածուների, որից յետոյ Ատենադպիրը կար-  
դում է բացակայ պատգամաւորների գրաւոր  
կարծիքները:

7. Տ. Տեղակալը և պ. Պրոկուրորը հաշուում  
են ձայները և ընտրուած չորս աւագ թեկնա-  
ծուների անունները մուծանում են ընտրական  
հայերէն և ոռուսերէն ցուցակների մէջ, որ ստո-  
րագրում են բոլոր ժողովականները, սկսած  
կրտսերագունից, և ապա Տ. Տեղակալը և պ. Պրո-  
կուրորը:

8. Տ. Տեղակալը փակում է նիստը և յայտ-  
նում է, որ յաջորդ օրը լինելու է ժողովի երկրորդ  
գումարումը:

Գ.

13 Դեկտ. 1. Կարգադրիչ Յանձնաժողովը վազօրօք  
պատրաստում է Մ. Տաճարում չորս քուէտուփի.  
Ժողովի գումարումը տեղի է ունենում նախորդ  
օրուան կարգով:

2. Ատենադպիրը մէկ-մէկ կարգում է պատ-  
գամաւորների անունները, սկսած կրտսերագու-  
նից, և նոցանից իւրաքանչիւրը ստանում է  
Տ. Տեղակալից իւր քուէն և ձգում է քուէտուփի:

3. Տ. Տեղակալը և պ. Պրոկուրորը իւրա-  
քանչիւր տուած քուէն նշանակում են քուէ-  
տուող պատգամաւորի անուան դէմ № 2 ցուցակի  
մէջ:

4. Քուէտրկութիւնը աւարտելուց յետոյ  
Տ. Տեղակալը համարում է ամէն մի թեկնածուի

4.

ստացած քուէները մի հոգեորական և մի աշ-  
խարհական ընթերակայի ներկայութեամբ և  
նշանակում է ընտրողական և ոչ ընտրողական  
քուէների թիւը համապատասխան սիւնեակներում  
№ 3 ցուցակի մէջ:

5. Բոլոր չորս թեկնածուների քուէտրկու-  
թեան արդիւնքը № 3 ցուցակի մէջ արձանա-  
գրելուց յետոյ՝ Տ. Տեղակալը կարդում է այն  
իւր ամենեցուն և յայտարարում է, որ նոցա-  
նից քուէների մեծագոյն թիւ ստացող երկուոր  
համարուում են թեկնածու կաթուղիկոսութեան  
Ամենայն Հայոց:

6. Ընտրութեան արդիւնքը արձանագրուում  
է № 3 ցուցակում ըստ Կանոն § 21:

7. Վերջին № 3 ցուցակի հայերէն և ոռու-  
սերէն օրինակները ստորագրում են բոլոր ժո-  
ղովականները, սկսած կրտսերագունից, և ապա  
Տ. Տեղակալը և պ. Պրոկուրորը:

8. Կազմուում է ընտրութեան մասին օրա-  
գիր, հայերէն և ոռուսերէն, որ և ստորագրում  
են բոլոր ներկայ եղող անդամները, պ. Պրոկու-  
րորը և Ատենադպիրը:

9. Ընտրական գործողութիւններն աւար-  
տելուց յետոյ Տ. Տեղակալը յայտնում է ժողովին  
ընտրութեան հետևանքը, Եկեղեցականները Մ. Իջ-  
ման սեղանի առաջ երգում են շարական դձ.  
Թագաւոր փառաց Աստուած Հոգիդ. ապա՝ Պահ-  
պանիչ, Հայր մեր. և յրեում են ժողովական-  
ները:

Ուղիղ է, Սինօղի Ատենադպիր

3. Յովհաննիսեան

	Ծննդեան տարիթ.	Հեռնադ. տարիթ.
Արքեպիսկոպոսներին եպիսկոպոսների անուանական ցուցակը. (Տես օրակարգ Բ. յօդ. 5)		
ԱՌԻՍԱՍՏԱՆ		
1, Կաթուղիկոսական Տեղակալ. Կա- թուղիկոսական ընտրութեան հա- մազգային ժողովի առաջնապետ և Սինօդի նախագահող Գէորգ արքեպ.	1847	1882
2, Սուքիս արքեպո. միաբան Մ. Ա.	1837	1875
3, Ներսէս արքեպ. առաջնորդ Նոր Նախիջեանի և Բեսսարաբիոյ	1844	1879
4, Անանիա արքեպ. առաջնորդ Եա- մախւոյ . . . . .	1846	1894
5, Յովհաննէս արքեպ. միաբան Մ. Ա.	1846	1898
6, Թարգուղիմէս եպիսկ. միաբն Մ. Ա.	1848	1901
7. Ղևոնդ եպիսկ. Լուսարարապետ Մայր Տաճարի . . . . .	1852	1901
8, Յուսիկ արքեպիսկ. անդամ Սինօդի և խմբագիր Արքարատ ամսագրի.	1853	1901
9, Սարգիս եպիսկ. Վանահայր Սևանայ.	1852	1905
10, Աշոտ եպիսկ. Միաբան Մ. Աթոռոյ.	1860	1909
11, Միհմար եպիսկ. առաջ. Աստրա- խանի . . . . .	1865	1909
12, Մեսրոպ եպիսկ. անդամ Սինօդի և Մատենագարանապետ Մ. Աթոռոյ.	1865	1909
13, Եփրեմ եպիսկ. ժամ. կառավարիչ Վրաստանի և Խճեր. հայոց թեմի,	1854	1910
14, Խորէն եպիսկոպոս Գոյիս Թեմակալ հայոց Երևանի . . . . .	1873	1910
Արտասահման		
ՏԱԶԿԱՍՏԱՆ		
15, Պատրիարք Հայոց Կ. Պօլսոյ Յովհ- հաննէս արքեպ. . . . .	1841	1899

	Ծննդեան տարեթ.	Տեսադր.
Նախկին պատրիարքներ,		
16. Մաղաքիա արքեպ. Օբմանեան .		
17. Եղիշէ արքեպ. Դուրեան, .	1841	1886
	1860	1898
18. Դրիգորիս արքեպիսկոպոս . .	1837	1872
19. Վահրամ արքեպ. պատրիարքական տեղապահ . . .	1846	1876
20. Եղիկ արքեպիսկոպոս . .	1843	1879
21. Հմայեակ եպիսկ քարոզիչ Բերայի	1839	1880
22. Ստեփանեսո արքեպ. առաջնորդ Նիկոմիդիոյ . . . .	1846	1886
23. Գեորգ արքեպիսկոպոս Երիցեան .	1852	1896
23. Մաղաքիա եպիսկոպոս քարոզիչ Ղալաթիայի . . . .	1848	1898
24. Յովան արքեպ. առաջնորդ Վահայ.	1849	1898
25. Գաբրիէլ եպիսկոպոս . . .	1850	1898
26. Յակովը եպիսկ. Աշոտ Փափաղ .	1847	1898
27. Մովսէս եպիսկ. պատր. փոխանորդ Բաղդատի . . . .	1847	1899
28. Տրդատ եպիսկ. նախկ. առաջնորդ Կեսարիայի . . . .	1850	1899
39. Ներսէս եպիսկ. առաջ. Տարօնոյ .	1847	1909
30. Եղիշէ եպիսկոպոս Զիլինդիլեան .	1861	1910
31. Դանիէլ արքեպ. պատրիարքական տեղապահ Երուսաղէմի . . .	1864	1910
32. Մկրտիչ եպիսկ. առաջ. Եղիպտոսի	1862	1910
33. Կարապետ եպիսկ. առաջ. Պահ- պըրման Բաղրէսէրի . . .	1869	1910
34. Բարգէն եպիսկ. առաջ. Դաղատիոյ.	1868	1911
35. Զաւէն եպիսկ. առաջնորդ Տիգրա- նակերտի . . . .	1862	1911
36. Սմբատ եպիսկ. առաջ. Կարնոյ .	1870	1910
37. Թորգոմ եպիսկ. առաջ. Սեբաստիոյ.	1873	1910

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ	ԾՆՆԴԻԱՆ ՄԱՐԵԲ.	ՀԵՌՆԱԴ. ՄԱՐԵԲ.
38. Սահակ արքեպ. առաջնորդ Հայոց Պարսկաստանի և Հնդկաստանի.	1853	1898
39. Կարապետ եպիսկ. առաջ. Ասրպատականի Հայոց . . . .	1865	1909
<hr/>		
ԵԽԾՈՂԸ		
41. Գէորգ Եպիսկոպ. առաջ. Եւլուպայի	1852	1898

### ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐ

Սինօդը գեկտեմբերի 7-ի նիստին քննելով առաջիկայ կաթողիկոսական ընտրութեան համար նշանակուած հոգիորական ներկայացուցիչների և ընտրուած պատգամաւորների փաստաթղթերը, կազմուամ է՝ հետեւալ ցուցակը կը թուրակուսի Ընժրութեան ՀԱՄԱՁԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ՀՆՏՐՈՂԻ ԻՐԱՒՈՒԹՈՎ ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐԻ ԱՅՈՒԱՆԱԿԱՆ:

### ՅՈՒՅԱԿ

Ամենայն Հայոց կարուղիկոսի տեղակալ եւ Համագոյին ժողովի նախագահ:

1. Գէորգ արքեպիսկոպոս Սուրբէնեան

### Սինօդի անդամներ

2. Յուսիկ արքեպիսկոպոս Մովսիսեան
3. Մեսրոպ Եպիսկոպոս Տէր Մովսիսեան
4. Սահակ վարդապետ Ամասունի
5. Յուսիկ վարդապետ Զոհրաբեան
6. Մատթէոս վարդապետ Մատթէոսեան
7. Բաբէն վարդապետ Աղաւելեան

### Ա. Եշմիածնի աւագ միաբաններ

8. Սուքիս արքեպիսկոպոս Պարզեան
9. Յովհաննէս արքեպիսկոպոս Շիրակունի
10. Բարգուղիմէոս Եպիսկոպոս Գէորգեան
11. Ղևոնդ Եպիսկոպոս Յովակիմեան
12. Աշոտ Եպիսկոպոս Շախեան
13. Գրիգորիս վարդապետ Տէր Յակովեան
14. Հմայեակ վարդապետ Արշարունի

### Ա. ՌՈՒՍԱՍՏԱՆ

- ա. Երեւանի կարուղիկոսական թեմ.
15. Փոխ-թեմակալ Խորէն Եպիսկոպոս Մուրադբէկեան
  16. Աշխարհական պատգամաւոր Գրիգոր Տէր Խաչարեան

բ. Վրաստանի եւ Խմելերի Հայոց թեմ.

17. Ժամ. կառավ. Եփրեմ Եպիսկոպոս Սուքիսեան
18. Աշխ. պատգ. Յովհաննէս Սպէնդիարեան

գ. Ղարաբաղի թեմ.

19. Առաջ. ներկայացուցիչ Բագրատ վարդ. Վարդապարեան
20. Աշխ. պատգ. Սամսոն Զէրքէզեան

դ. Շամախույ թեմ.

21. Թեմ. Առաջ. Անանիս արքեպիսկոպոս
22. Աշխ. պատգ. Թադէոս Զաքարեան

ե. Նոր-Նախիջենի եւ Բեսսաբիոյ թեմ.

23. Առաջ. ներկայացուցիչ Տիրայր վարդ. միաբ. ո. էջմ.  
24. Աշխ. պատգ. Գէորգ Զուբար

զ. Ասրախանի թեմ.

25. Թեմ. առաջ. Մխիթար Եպիսկոպոս Տէր Մկրտչեան  
26. Աշխ. պատգ. Նիկողայոս Աւագեան (Տէր Եկած)

### Բ. ՏԱՁԿԱԾԱՆ

է. Սսի կաթուղիկոսական տուն.

27. Հոգհ. {  
28. Աշխ. } Հեն մասնակցել

ը. Աղթամարայ կաթուղիկոսական տուն.

29. Կաթուղ. պատգ. Յակովը քահ. Խաչվանքեան, Ալէքսանդրապոլ  
30. Աշխ. պատգ. Թաթէոս Խղմալեան, Ալէքսանդրապոլ  
թ. Երուսաղէմի պատրիարքութիւն.

31. Պատր. ներկ. Յագրատ վրդ. Վարդագարեան, միաբ. էջմ.  
32. Աշխ. պատգ. Սամսոն Յարութիւնեան, Թիֆլիս

ժ. Կ. Պօլսոյ պատրիարքական թեմ.

33. Պատր. ներկ. Յակովը Եպիսկոպոս Աշոտ Փափազեան  
34. Աշխ. պատգ. Յովհաննէս Զիգմէ-Սարափ  
ժա. Թէֆրդադի թեմ.

35. Առաջ ներկ. Եղիշէ վրդ. Շահումեան, Սևանի միաբ.  
36. Աշխ. պատգ. Ալէքսանդր Խատիսեան, Թիֆլիս

ժբ. Ադրիանուալսի թեմ.

37. Առաջ. ներկ. Սիօն վարդ. Տ. Մանուէլեան միաբ. էջմ.  
38. Աշխ. պատգ. Երուանդ Էֆ. Տէր Անդրէասեան

ժգ. Վառնայի թեմ.

39. Գրիգորիս ծ. վրդ. Պալաքեան  
40. Աշխ. պատգ. Գէորգ Ամիրեան, Երևան

ժդ. Մոլդովալախիայի թեմ.

41. Առաջ. ներկ. Ներսէս վրդ. Մելիք-Թանգեան միաբ. էջմ.  
42. Աշխ. պատգ. Արքահամ Նուհուլեան

ժե. Տրապիզոնի թեմ.

43. Առաջ. Սերովէ վարդապետ Սամուէլեան  
44. Աշխ. պատգ. Նշան Անդրէասեան

ժգ. Զանիկի թեմ.

45. Առաջ. փոխ. Տ. Գարեգին քնյ. Շինիկձեանց  
46. Աշխ. պատգ. Հայկ Հինդլեանց

ժէ. Շաախն-Դարանիսարի թեմ.

47. Առաջ. ներկ. Երուանդ քհ. Նալբանդեան, Սիմֆերոպոլ (Տէր Եկած)

48. Աշխ. պատգ. քժ. Գրիգոր Սաղեան, Բաքու

ժը. Թամզարա եւ Ացպերի թեմ.

49. Առաջ. ներկ. Հմայեակ վարդ. Արշարունի միաբ. էջմ.  
50. Աշխ. պատգ. Վրթանէս Փափազեան, Շուշի

ժը. Ամասիայի եւ Մարգուանի թեմ.

51. Առաջ. Գէորգ ծ. վարդապետ Իրբանսեան  
52. Աշխ. պատգ. Յարութիւն Գարտմանեան

ի. Եղոկիոյ (Թոխաւ) թեմ.

53. Առաջնորդ Տ. Շաւարչ ծ. վարդապետ Սահակեան  
54. Աշխ. պատգ. Գէորգ Մկրտչեան

իա. Սեբատիոյ (Սվագ) թեմ.

55. Առաջնորդ Տ. Թորգոնմ Եպիսկոպոս

56. Աշխ. պատգ. Արշակ Բաքեան, Թիֆլիս

իբ. Կարնոյ (Երգում) թեմ.

57. Առաջնորդ Տ. Մմբատ եղիսկոպոս

58. Աշխ. պատգ. Վահան Շահնեան

իգ. Վահայ թեմ.

59. Առաջ. ներկ. Տ. Վահրամ վարդապետ միաբ. և. էջմ.

60. Աշխ. պատգ. Տիգրան Յովհաննիսեան, Թիֆլիս

ից. Լիմ իւ Կուոց անապատ.

61. Առաջ. ներկ. Տ. Ղեոնդ քնն. Ալիխանեան, Թիֆլիս

62. Աշխ. պատգ. Համբարձում Առաքելեան, Թիֆլիս

իծ. Բասենի (Հասան-Լալա) թեմ.

63. Առաջն. փոխանորդ Տ. Վահան վարդապետ

64. Աշխ. պատգ. Գէորգ Խատիսեան, Թիֆլիս

իզ. Բայազելի թեմ.

65. Առաջ. Տեղապահ Տ. Ներսէս քահանայ

66. Աշխ. պատգ. Խաչատրութ Աքրիկեան, Թիֆլիս

իէ. Մօնյ թեմ.

67. Առաջ. ներկ. Իսահակ վրդ. Տ. Միքայէլեան, միաբ. էջ.

68. Աշխ. պատգ. Առաքել Սիմօնեան, Բաթում

իը. Քրոնյ թեմ.

69. Առաջնորդի ներկ. Տ. Մմբատ եղիսկոպոս

70. Աշխ. պատգ. Յակովը Շաւարշ (Սամարգանդ)

իբ. Բաղէսի թեմ.

71. (Հկաբ)

72. Աշխ. պատգ. Սամսոն Զէրքեղեան, Թիֆլիս

լ. Թերջանի թեմ.

73. Առաջնորդական փոխանորդ Տ. Հրանդ վարդապետ

74. Աշխ. պատգ. Գէորգ Էֆ. Աբովյեան, Կարին

լա. Բաբերդի (Բայբուրդ) թեմ.

75. Առաջն. Տեղապահ Տ. Տիրայր ծ. վարդապետ

76. Աշխ. պատգ. Խաչիկ Պողոսեան, Թիֆլիս

լբ. Երզնկայի թեմ.

77. Առաջ. փոխանորդ Տ. Եղիշէ քն. Արամեան

78. Աշխ. պատգ. Տիգրան Փափաղեան

լգ. Զնգուշայ թեմ.

79. Առաջ. ներկ. Տ. Եղիշէ աւ. քնն. Գեղամեան, Բաքու

80. Աշխ. պատգ. Գարեգին Ենգիբարեան, Բաքու

լդ. Բարսի թեմ.

81. Առաջնորդի ներկ. Տ. Մուշէ վարդ. միաբ. և. էջմ.

82. Աշխ. պատգ. Արտաշէս Շինեան, Թիֆլիս

լե. Զարսանչակի թեմ.

83. Առաջն. ներկ. Տ. Բաբկէն վարդապետ միաբ. և. էջմ.

84. Աշխ. պատգ. Արտաշէս Յովհաննիսեան, Երևան

լզ. Խարբերդի թեմ.

85. Առաջ. ներկ. Պարգև ծ. վարդապետ Դանիէլեան

86. Աշխ. պատ. Արքահամ Դաստակեան, Բագու (Հէր եկել)

լէ. Արարիկիրի թեմ.

87. Առաջն. փոխանորդ Տ. Կորիւն քահանայ

88. Աշխ. պատգ. Միհրդատ Հայկազն

լը. Ակնոյ թեմ.

89. Առաջն. ներկ. Տ. Տըգատ քահանայ Պոյեաճեան

90. Աշխ. պատգ. Հայկ Անտոնեան

լը. Քեամախու թեմ.

91. Առաջ. ներկ. Արշակ քն. Տ. Մինասեան Թիֆլիս

92. Աշխ. պատգ. Յովհաննիս Տ. Միքայէլեան, Երևան

խ. Առղիոյ թեմ.

93. Առաջն. ներկայացուցիչ Տ. Բենիկ վարդ. էջմ. միաբ.  
94. Աշխ. պատգ. բժ. Արտաշէս Շխեան, Թիֆլիս

խա. Կեսարիոյ թեմ.

95. Առաջ. ներկ. Մուրեն արեգայ Մանասեան, էջմ. միաբ.  
96. Աշխ. պատգ. Մկրտիչ Հաճի Պալեան, Թիֆլիսաբնակ

խր. Տիգրանակերտի (Դիարբեկիր) թեմ.

97. Առաջ. ներկ. Գարեգին վրդ. Յովսէփեան, էջմ. միաբ.  
98. Աշխ. պատգ. Ալեքսանդր Քալանթար

խզ. Քրդիստան (Սուերդ) թեմ

99. Առաջնորդի ներկ. Տ. Ընձակ վարդապետ միաբ. և. էջմ.  
100. Աշխ. պատգ. Տիգրան Բէկադեան, Բաքու

խզ. Եղեսիայի (Աւրեա) թեմ.

101. Առաջն. ներկ. Տ. Ղևոնդ քհայ. Ալիխանեան, Թիֆլ.  
102. Աշխ. պատգ. Միմէօն Տէր Մինասեան, Շուշի

իե. Բաղդատու թեմ.

103. Առաջ. ներկ. Տիգրայր վրդ. էջմ. միաբան  
104. Աշխ. պատգ. Տիգրան Գույումճեան, Իոկանդ

խզ. Գաղատիոյ (Ենիկուրիս) թեմ.

105. Առաջնորդ Տ. Բարդէն եպիսկոպոս  
106. Աշխ. պատգ. Կարապետ Շահինեան

իսէ. Զմիւնիոյ (Եզմիւրի) թեմ.

107. Առաջնորդ Տ. Մատթէոս ծ. վարդ. Ինճէեան  
108. Աշխ. պատգ. Յակոբ Միքայէլեան

խը. Եղիպտոսի Եւ Կրետէի թեմ.

109. Առաջ. ներկ. Մեսրոպ աւագ քհա. Մելեան, Բաթում.  
110. Աշխ. պատգ. Վահան Թէքէեան

խր. Բանդրմա-Բալբէսէրի թեմ.

111. Առաջ. ներկ. Տ. Խաչիկ ծ. վարդապետ միաբ. և. էջմ.  
112. Աշխ. պատգ. Թագւոր Տատուրեան

ծ. Գուղինոյի թեմ.

113. Առաջնորդ Տ. Պարգև ծ. վարդ. Դանիէլեան  
114. Աշխ. պատգ. Պետրոս Գալֆայեան

ծա. Նիկոմիդիոյ (Իզմիդ) թեմ.

115. Առաջ. ներկ. Տ. Եփրեմ Եպիսկոպոս կառ. Թփ. թեմի  
116. Աշխ. պատգ. (Հկար)

ծբ. Խուլիվանից (Զմէկածագ) թեմ.

117. Առաջն. ներկ. Տ. Արիստակէս վար. միաբ. և. էջմ.  
118. Աշխ. պատգ. Միհրդատ Հայկացն

ծգ. Բրուսայի թեմ.

119. Առաջ. ներկ. Յուսիկ վրդ. Զոհրաբեան, էջմ. միաբ.  
120. Աշխ. պատգ. Յովհաննէս Յովհաննիսեան, Վաղարշպ.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ծդ. Աւրաքանի թեմ.

121. Առաջ. Կարապետ Եպիսկոպոս  
122. Աշխ. պատգ. Զաքարիա Նազարէկէեան

ծէ. Պարսկաստանի Եւ Հնգկաստանի թեմ.

123. Առաջ. ներկ. Դիոնիսիոս վարդապետ, Թիֆլ.  
124. Աշխ. ներկ. Տիգրան Ռաշմաճեան, Ալեքսանդրապոլ  
Եիրողից

ծգ. Արեւմտեան Եւրոպայի թեմ.

125. Առաջ. ներկ. Հմայեակ վրդ. Արշարունի, էջմ. միաբ.  
126. Աշխ. պատգ. Պետրոս Տօնապետեան

ԱՄԵՐԻԿԱ

ծէ. Ամերիկայի թեմ.

127. Առաջ. տեղապահ Պօղոս վարդ. Գաֆթանեան  
128. Աշխ. պատգ. Համբարձում Ամպրուկեան

Պատկանահանդեսի լիտուական պատկամաւոր

ների ժողովը կարող էր ստուգել պատգամաւորների լիազօրութիւնները, ուստի և Տեղակալ Սրբազնի պաշտօնական գրութեամբ կ. Պօլոց Հայոց պատրիարքի ներկայացուցիչ Տ. Յակով Սրբազնը մի օր առաջ, նախքան աշխարհական պատգամաւորների երդումը, գումարեց պատգամաւորների ժողով, որ ստուգելով լիազօրութիւնները կազմեց հետեւալ արձանագրութիւնը և դեկտեմբերի 11-ին առաւօտեան 9 ժամին յանձնեց Սինօդին.

«ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ»

«Ի 10 դեկտեմբերի 1911 ամի, Ա. Էջմածին:

Նորաշէն Մատենադարանի դահլիճում երեկոյեան ժամը 5½ կն կայացաւ կաթուղիկոսական ընտրութեան համար ժողովուած պատգամաւորների պաշտօնական ընդհանուր ժողովը, որ բաց անելով ս. Յակովը արքեպիսկոպոսը կարգաց Տեղակալ Գէորգ արքեպիսկոպոսի յետագայ պաշտօնական գրութիւնը ի 10 դեկտեմբերի 1911 թ. № 2194, այն է, «Խնդրեմ ի Սրբազնութիւնէ Զերմէ բանալ զժողով պատգամաւորաց, որ վասն ընտրութեան Կաթուղիկոսի Ամենայն Հայոց, առ ի ընտրել ատեան վասն ստուգելոյ զի ազօրութիւն պատգամաւորաց, ըստ վերջոյ բացատրութեան նախարարի, և յանձնարարել ատենին զնետեանս ստուգութեան գրաւորապէս մատուցանել Սինօդի ի տնօրէնութիւն»:

Այս հիման վերաց Աշոտ սրբազնը ժողովը բացուած հրատակելով առաջարկեց ընտրել ժողովի դիւանը և ձեռնարկել պատգամաւորների լիազօրութեանց ստուգութեանը: Ժողովը միաձայնութեամբ խնդրեց նախընթաց մասնաւոր ժողովի միջոցաւ ընտրուած դիւանին վարել իր պաշտօնը՝ պատուաւոր նախազան Տ. Յակովը արքեպիսկոպոս Աշոտ-Փափազեան, ատենապետ Սամսոն Յարութիւնեան, փոխ ատենապետներ՝ Նշան էֆ. Անդրէասեան և Գէորգ Չուբար, քարտուղարներ՝ Մեսրոպ աւագ քննյ. Մնկեան և Հայկ Անտոնեան:

Պ. Ատենապետը անցնելով իւր պաշտօնին, խնդրեց Սինօդի գործավար Յովհ. Մուշեղեանին կարգալ Ներքին Գործոց նախարարութեան կողմից ստացած հոկտեմբերի 7-ին՝ ընդ № 9005, Սինօդի պ. պրօկուրօրի անուանը ուղղած պաշտօնական գրութեան 1 կէտը, որով իրաւունք է արւում ուստապամտորական ժողովին ստուգելու իր անդամների լիազօրութիւնները:

Սրանից յետոյ պ. Ատենապետն առաջարկեց պատգամաւորներին իրենց ստորագրութեամբ թերթի վերաց զնելու իրանց ներկայութիւնը, որից երեաց, որ ներկայ էին 94 պատգամաւոր:

Պ. Ատենապետը յայտարարեց ժողովին որ պ. Նախարարի վերը առաջ քերած զբութիւնը ի նկատի ունենալով, ս. Էջմիածնում գտնուած պատգամաւորները մասնաւոր կերպով ժողովուելով յանձնարարել էին իրենց կողմից թուրքով եպիսկոպոսին, Վարդապետեան Բաղրատ և Մատթէոս Խնձիկեան վարդապետներին, իրաւաբաններից՝ Յովհաննէս Սպէնդիարեանին, Գէորգ Չուբարին, Գրիգոր Տէր Խաչատրեանին, Գարեգին Ենգիբարեանին և Կարապետ Շահինեանին ստուգութեան ենթարկելու պատգամաւորների ընտրութեան վերաբերեալ Սինօդի մէջ հաւաքուած ըոլոր թղթերը, ընդհանուր ժողովին զեկուցանելու նպատակով: Այդ նախապարաստական աշխատանքը կարևոր էր համարուել վազորօք կատարելու, ի նկատի ունենալով ժամանակի սղութիւնը: Արդ ընդհանուր ժողովին կմնայ ընդունել մասնաւոր կերպով կատարած ընդհանուր ժողովի որոշումը և լսել նրանց զեկուցումը կամ մերժել նրանց գոյութիւնը և վարուել ըստ իւր հայեցողութեան: Ընդհանուր ժողովը հաւանութիւն տալով կատարուած գործողութեանը խնդրեց զեկուցանել:

Զեկուցումից երեաց, որ լիազօրութիւնները ընդհանուր առամբ օրինաւոր են, ի բաց առեալ 8 անձից, որից 4-ի, այն է, Սիօն և Գրիգորի Պալաքեան վարդապետների, Ամերականյաց կողմից երկու աշխարհականի և Սամունեանի մասին չէին եկել ընդհանուր համաձայնութեան վերյիշեալ անձինք, իսկ մնացած 4-ի, այն է, Եղիշէ վարդապետ Շահումեանի, Բաբէէն վարդապետ Աղաւելեանի, Գէորգ Ամերեանի, Գրիգոր Մկրտչեանի լիազօրութիւնների մասին բողոք յայտնեց միայն Ենգիբարեան:

Ժողովը վերյիշեալներից օրինաւոր ճանաչեց Սիօն և Գրիգորիս վարդապետների և Ամերիկանյաց պատգամաւոր Համբարձում Ամպրուկեանի լիազօրութիւնները, իսկ Սամունեանն ինքն իր լիազօրութեան հարցը լուծելու համար հեռագրով գիմած է նախարարաց խորհրդի պ. Նախագահին և սպասում է պատասխանի, ուստի և զրական մտօք պատասխան ստանալուց յետոյ ճանաչել նրա լիազօրութիւնը օրինաւոր գտնելով: Գալով Ենգիբարեանին յայտնեց, որ նա բողոքում է կատարուած ընտրութիւնների թէ օրինական և թէ բարոյական կողմերի մասին և պատրաստ է իր բողոքի հիմունքը յայտնել ժողովին, եթէ սա թոյլ կտայ:

Առ այս ընդհանուր ժողովը գտաւ, որ իր իրաւունքից վերէ քննութեան առնել կատարուած ընտրութեան բարոյական կող-

մերը, այլ միայն ինպրում է զեկուցանել իւրաքանչիւր մի պատ-  
գամաւորի ընտրութեան մէջ իր նկատած օրինական թերութիւն-  
ների մասին:

Այս առթիւ Ենդիբարեանցը յայտնեց, որ իրեն է վերապա-  
հում իրաւունք առանձնապէս բողոքելու, իսկ յիշատակուած  
պատգամաւորների լիազօրութեան մասին չքերելովոչ մի առանձին  
պատճառաբանութիւններ, ընդհանուր ժողովը վճռեց ճանաչել և  
նրանց, այն է՝ Եղիշէ վարդապետ Շահումեանցի, Բարդէն վար-  
դապետ Աղաւելեանցի, Գէորգ Ամիրեանցի և Գէորգ Մկրտչեանցի  
լիազօրութիւններն օրինաւոր, որով և պ. Ատենապետը ժողովը  
յայտարարեց փակուած:

Պատուաւոր նախագահ դիւանին Յակովը հպիւկ. Աշոտ  
Ատենապետ՝ Սամսոն Յարութիւննեան  
Փոխ ատենապետ՝ Նշան Անտոնիան  
Քարտուղարներ՝ Մեսրոպ աւ. քնյ. Մելեան  
Հայկ Անտոնիան.

Բողոքներ, պատգամաւորների լիազօրութեան հաստատութիւն եւ  
օրակարգերի կատարումն.

Պ. պ. Գարեգին Ենդիբարեանը և Գ. Զուբարը հասցըրին  
իրանց բողոքները Սինօդին առաջինը վերև յիշուած արձանա-  
գրութեան հետ, դեկտեմբերի 11-ին, ժամը 9½-ին իսկ երկոր-  
դը՝ մի օր յետոյ:

Սինօդը գեկտեմբերի 11-ին ժամը 10-ին լսելով պատգա-  
մաւորների լիազօրութիւնները ստուգող յանձնաժողովի արձա-  
նագրութիւնը և պ. Գ. Ենդիբարեանի բողոքը, № 811 օրագրով  
որոշեց հաստատել պատգամաւորներին, իսկ պ. Գ. Ենդիբարեանի  
բողոքը թողնել առանց հետևանքի:

Այս գործողութիւնները կատարելուց յետոյ ժամը 11-ին  
պատգամաւորները ժողովուեցին Վեհարան և Տեղակալ Սրբազնի  
նախընթացութեամբ առաջնորդուեցին տաճար, ուր Տեղակալ  
Սրբազնը մատուցանելով ս. պատարագ, կայսերական տաճ-  
բարօրութեան համար մաղթանք կատարելուց յետոյ երդմնեցըց  
աշխարհական պատգամաւորներին:

Դեկտեմբերի 12-ին առաւտեան 9 ժամին Սինօդը նախա-  
պէս լսեց պ. Գ. Զուբարի բողոքը և մակագրութեամբ նոյն բողոքի  
վերայ թողեց առանց հետևանքի, և այնուհետև սկսեց ընտրական  
օրակարգի կատարումն:

Օրակարգի կատարումն.

ա. Դեկտմ. 10-ին, շաբաթ օրը օրակարգին համեմատ  
հանդիսաւոր սուրբ պատարագից յետոյ, որ մատոյց Կարնի  
առաջնորդ Տ. Սմբատ Եպիսկոպոս, հոգեոր ու աշխարհական  
պատգամաւորների և բազմաթիւ ազօթաւորների ներկայու-  
թեամբ կատարուեց տարելցի պաշտօն ի Տէր հանգ. Տ. Մատ-  
թէոս Բ. Սրբազնագոյն Կաթողիկոսի գերեզմանի վերայ. և  
զգացուած գամբանական խօսեց Սեբաստիայի առաջնորդ  
Տ. Թորգոմ Եպիսկոպոսը:

բ. Դեկտմ. 11-ին ժամը 9-ին կիւրակէ օրը, օրակարգի  
համեմատ, բոլոր հոգեոր և աշխարհական պատգամաւոր-  
ները, բարձր. կառավարութեան ներկայացուցիչ գրաֆ  
Տիգենհառուղէն, Սինօդի պրօկուրօրը և Սինօդի ատենա-  
դպիրը իւր օգնականներով խմբուեցին վեհարան և այսե-  
ղից Կաթուղիկոսական Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկո-  
պոսի առաջնորդութեամբ առաջնորդուեցին Տաճար, ուր  
սկսուեց հանդիսաւոր սուրբ պատարագը, որ մատոյց Տ.  
Տեղակալը: Ա. պատարագից յետոյ Նորին Ամենապատուու-  
թիւնը կատարեց մաղթանք Թագաւոր կայսեր արևշատու-  
թեան և Կայսերական ընտանիքի բարօրութեան համար,  
այսուհետև ս. Իջման սեղանի առաջ երդմնեցըց աշխար-  
հական պատգամաւորներին, որոնք և ստորագրեցին երդմ-  
նագիրը, որ ունի հետևեալ ձեր.

### ՅՈՒՂՋՅ. ԵՐԳՄԱՆ

Ես, իներքոյ անուանեալ աշխարհական պատգամաւոր Կա-  
թուղիկոսական ընտրութեան, խոստանամ և երդնում յԱմենա-  
կարողն Աստուած առաջի սրբոյ Աւետարանի Նորա առ այն՝ թէ  
ցանկամ և պարտիմ յայսմ առաջիկայ ընտրութեան Ծայրագոյն  
Պատրիարքի և Կաթուղիկոսի ամենայն Հայոց վասն բարձրագոյն  
կառավարութեան սրբոյ Եկեղեցւոյ Հայաստանիայց և ահաշու-  
թեան Եկեղեցականաց նորին ըստ մաքուր խղճի մտաց և պար-  
տուց իմոց առանց իրիք աշառութեան և անձնական ակնկալու-  
թեանց, ի բաց հերքելով յինէն զամենայն մախանու թշնամու-  
թեան և կամ զորպիսի և իցէ շաղկապս մերձաւորութեան և բա-  
րեկամութեան, ընտրել ի միջոյ հոգեսրբականաց հայրենի Եկեղեց-

ւոյն իմոյ զայնպիսի անձն, զոր ըստ յատկութեանց հանձարոյ և խղճի մտացն առաւել ընդունակագոյն և արժանաւորագոյն համարիմ ես, և յորմէ ակն ունիմ, զի ի կատարումն պարտաւորութեանց իւրոց՝ զորս զնէ ի վերայ նորա վեհ աստիճանն այս հոգեոր, հանդիսացուացէ նա զինքն ջերմեանդն պաշտօնեայ Աստուծոյ հոգունակ տնօքէն բարօրութեան և օգտի Եկեղեցւոյն Քրիստոսի և նմա հաւատացեալ Հայրապետական իշխանութեանն ի վերայ բանւոր հօտին Քրիստոսի: Իսկ եթէ այլազգ վարեցաց, յայնժամ իբրև անհոգ զօգտէ Եկեղեցւոյ և ճշմարիտ որդւոց նորին, յորում է սեպհական օգուտն իմ, արկանեմ զանձն իմ ընդ մեղադրանօք եղբայրակացաց իմոց և ի հանդերձելումն պատասխանաւորութեան առաջի Աստուծոյ և ահեղ գատաստանի Նորա: Ի վախճան երդման իմոյ վասն անաչառ ընտրութեան համբուրեմ զբան և զՄաչ Փրկչին մերոյ: ամէն:

գ. Դեկտ. 12-ին բշ. օրը ժամը 11-ին օրակարդի համեմատ բոլոր պատգամաւորները և ի պաշտօնէ յատկացեալ անձինք ժողովուեցին վեհարան և այնտեղից Տ. Տեղակալի առաջնորդացութեամբ առաջնորդուեցին Տաճար, ուր գրուած էին սեղաններ և աթոռներ. բոլորը, թէ պատգամաւորներն և թէ պաշտօնական անձինք բռնեցին իրենց տեղերը:

Սահմանուած սաղմոսից, աղօթքներից յետոյ Համազգային ժողովի նախագահ և Կաթողիկոսական Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը բաց արեց ժողովը պատշաճ ատենաբանութեամբ: Սինօդի պ. պրօկուրօրը կարդաց ժողովի բացումն արտօնող Տ. փոխարքայի թուղթը (տես վերև եր. 21) իսկ Սինօդի ատենապիրը՝ նրա թարգմանութիւնը:

Այդ ժամանակ առաջ անցաւ Ա. Էջմիածնի միաբանութեան ներկայացուցիչներից Տ. Սուքիաս արքեպիսկոպոսը և յայտնելով 28 պատգամաւորների գրաւոր բողոքի իմաստը, բողոքը ներկայացրեց Համազգային ժողովի նախադասողին ու իւր համախոնների հետ դուրս եկաւ Տաճարից,

Ժամանակակից ամէսք կատար գնացաղեւեն են:

Ժամանակակից կատար գնացաղեւեն են:

1. Սուքիաս արքեպիսկոպոս միաբ. Էջմ.
2. Անանիա արքեպիսկոպոս առաջ. Շամախւոյ
3. Յովհաննէս արքեպիսկոպոս միաբ. Էջմ.
4. Ղեոնիկ հպիսկոպոս միաբ. Էջմ.
5. Կարապետ եպիսկոպոս առաջ. Ատրպատականի
6. Բարդէն եպիսկոպոս առաջ. Գաղապահյի
7. Տիրայր վարդ. ներկ. առաջ. Բնասարիոյ և Բաղդատի
8. Յուսիկ վարդ. անդամ Սինօդի և ներկ. առաջ. Բրուսայի
9. Բհոնիկ վարդ. Արզնիի առաջ. հոգե. ներկայացուցիչն
10. Տիրայր ծ, վարդ. Մարգարեան, պատգ. Բարերդի
11. Մուշէ վարդ. առաջ. ներկ. Բալուի
12. Գարեգին վարդ. Յովակիեան առաջ. ներկ. Տիգրանակերտի
13. Հրանդ վարդ. Յովասափեան, առաջ. փոխ. Դերջանի
14. Եղիշէ աւագ քննյ. Գեղամեանց առաջ. ներկ. Զնքուշի
15. Ներսէս քննյ. Քաջրերունի, առաջ. տեղապահ Բայազէդի
16. Յովհաննէս Սպէնդիարեան պատգ. Վրաստանի և Խմերէթի Հայոց թեմի
17. Սամոն Զէրքէղեան, պատգ. Ղարաբաղի Հայոց թեմի
18. բժ. Թաղէս Զաքարեան, պատգ. Շամախւոյ թեմի
19. Գէորգ Զուբար, պատգ. Եոր-Նախիջևանի և Բնասարիոյ Հայոց թեմի
20. Արշակ Բարեան, պատգ. Արքասիոյ Հայոց թեմի
21. Համբարձում Առաքելեան, պատգ. Լիմի Կառւց անապատների
22. Տիգրան Գայումճեան, պատգ. Բաղդատի
23. Խաչատուր Աֆրիկեանց, պատգ. Բայազէդի
24. Աղէքսանդր Բալանթար, պատգ. Տիգրանակերտի
25. բժ. Արտաշէս Շինեան, պատգ. Բալուի և Արզնիի վիճակների
26. Գարեգին Ենգիբարեան, պատգ. Զնքուշի
27. Յովհաննէս Յովհաննիսեան, պատգ. Բրուսայի
28. Գէորգ Արտուրեան, պատգ. Դերջանի.

Համազգային ժողովին պէտք է մասնակցէին

Պակաս էին հոգեռքականների	71	թուից
Սինօդի անդամ	1	
Շապին-Գարանիսարից	1	
Զէր մասնակցել Սով թեմը	1	20
Ժողովից դուրս դնացին 15 հոգի		
Ռւճնալով ջայն	17	
Մնացին ժողովում 43 հոգի	51	ձայնով
Պակաս էին աշխարհականների	57	թուից
Զէր եկել Աստրախանից	1	
Զէր եկել Խարբերդից	1	
Զէր ընտրուած Նիկոմիդիայից	1	19
Զէր մասնակցել Սով թեմը	1	
Ժողովից դուրս եկան 13 հոգի		
Ռւճնալով ձայն	15	
Մնացին ժողովում 37 հոգի	38	ձայնով

Ընդամենը 89 ձայն.

Մի բողոք ևս ներկայացրեց միաբանութեան ներկայացուցիչներից Տ. Բարդուղիմէոս Եպիսկոպոսը, առանց ժողովից հեռանալու:

Այսուհետեւ ժողովը շարունակուեց ամենայն կանոնաւորութեամբ, ժողովին մամնակցում էին 80 հոգի 89 ձայնով: Բաց ձայնատութեամբ, ընտրուեցին չորս աւագոյն թեկնածուներ.

1. Գէորգ արքեպիս. Սուրբնեան 86 ձայնով ընդէմ 3-ի
2. Եղիշէ արքեպիս. Դուրեան 84 » » 4-ի
3. Մեսրոպ եպիս. Տ Մովսէսնեան 78 » » 11-ի
4. Ատեփինանոս արքեպ. Յովակիմնեան 63 » » 23-ի

Նախագահը ի լուր ժողովի կարգաց ընտրութեան հետեամբը, և ժողովականներին ստորագրել տալով արձանագրութիւնը փակեց ժողովը ճաշից յետոյ ժամը 3-ին:

Դեկտեմբերի 13-ին, օրակարգի համամատ պատգամաւորներն ու պաշտօնարան անձինք սահմանուած կարգով վեհարանից առաջնորդուեցին Տաճար: Սահմանուած սաղմոսից և աղօթքներից յետոյ իւրաքանչիւր ոք կալաւ

իւր աեղը և սկսուեց զաղանի քուէարկութիւն չորս աւագոյն թեկնածուներից երկուսը ընտրելու համար. Քուէարկութեան արդիւնքն եղաւ

սպիտ. սկ	
ա. Գէորգ արքեպիս. Սուրբնեան	58 30
բ. Եղիշէ արքեպիս. Դուրեան	57 32
գ. Մեսրոպ եպիս. Տէր Մովսէսնեան	39 49
դ. Սաեփինանոս արքեպիս. Յովակիմնեան	38 51
Քուէնները հաջուելուց յետոյ որպէս քուէնների առաւելութիւն ստացող	
8. Գէորգ արքեպիսկոպոս Սուրբնեան և Տ. Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեան հրատարակուեցին առաջին ընտրելիներ Հայրապետական աթոռի համար, որ Համագոյային ժողովը ընդունեց բուռն ոգեորութեամբ և ուրախական սրագին բացականչութեամբ Կազմուեց հետեեալ արձանագրութիւնը և ստորագրեցին բոլոր ժողովականները:	

13 դեկտեմբերի 1911 ամի Ա. Էջմիածին.

Ամսիս 11-ին Ա. Էջմիածնի Սինօդի, տարւոյս փետրրուարի 16-ին թ. 116 օրագրական որոշման և Կովկասի Տ. Փոխարքայի տարւոյս նոյեմբերի 18 թ. 24306 առաջադրութեան համաձայն սկսուեցան ամենայն Հայոց Կոթուղիկոսի թեկնածուների ընտրութեան համար գումարուած Համագոյային ժողովի զբաղմունքները ըստ այսուհիւրակի, ամսոյս 11.ին հոգեօրական և աշխարհական պատգամաւորները առաւօտեան 10 ժամին ժողովուեցան Վեհարան, ուր նոցա ընդունեցին Տ. Տեղակալը և Սինօդի անդամները:

Տէր Տեղակալը հրաւիրեց ժողովականներին Մայր Տաճարը ունկնդիր լինելու և պատարագին, որ մատոյց ինքն Տ. Գէորգ արքեպիսկոպոսը. Ա. պատարագից յետոյ կատարուեցաւ զոհացողական մաղթանք ՆՈՐԻՆ ԿԱՅԵՒՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ և համայն Օդսոտափառ տան կենաց և բարօրաթեան համար Մաղթանքից յետոյ Տ. Տեղա-

կալը երդուեցրեց բոլոր ներկայ գտնուած աշխարհական պատգամաւորներին, որի մասին սահմանուած կարդով կազմուեցաւ պատշաճաւոր արձանագրութիւնն:

Յաջորդ օրը, գեկտեմբերի 12-ին առաւոտեան 11 ժամին բոլոր հազ և ուսկան և աշխարհական պատգամաւորները նախընթաց օրուան կարդով Վեհարանից իջան Մայր Տաճար:

Ամենապատիւ 8. Տեղակալը սահմանուած կարդով բանալով ժողովը, ատենաբաննեց ըստ պատշաճի, որից յետոյ Սինօդի պ. Պրոկուրօրը կարդաց ի լուր ժողովականների կովկասի 8. Փոխարքայի վերոյդրեալ թ. 24306 առաջադրութիւնը ժողովի բացման մասին, որի հայերէն թարգմանութիւնը կարդաց ատենագպիրը: Առանից յետոյ Մայր Աթոռի միաբանութեան պատգամաւոր 8. Առաքիաս արքեպիսկոպոսը, խօսք խնդրելով Մրբազան նախագահից, յայտնեց, թէ ժողովի անդամներից Պարսկաստանի, Տաճկաստանի և Ռուսաստանի միքանի թեմերի հոգեուրական և աշխարհական պատգամաւորներ, ինչպէս նաև Մայր Աթոռի միաբանութեան և Սինօդի ներկայացուցիչներից մի քանիսը չկամենալով իրենց վրայ տոնել այս ժողովի արդինքի համար պատասխանատուութիւն, հրաժարւում են ժողովին մասնակցելուց և ներկայացնում են իրենց պատճառաբանուած բողոքը, որ խնդրում են մտցնել ընտրական ժողովի օրադրի մէջ բառ առ բառ նորան օրինական ընթացք տալու համար: Այդ բողոքը, որ ստորագրել են 28 անդամ 32 ձայնով կարդացուեցաւ ի լուր ժողովականների:

Պ. Սամոն Յարութիւնեան, որ նախագահն էր գեկտեմբեր 10-ին պատգամաւորների լիազօրութիւնները քննելու համար կարդած ժողովի, համաձայն ներքին գործերի նախարարութեան առաջադրութեան յանուն Սինօդի Պրոկուրօրի, հոկտ. 7 թ. 9005 և 8. Տեղակալի գրութեան յանուն 8. Յակովը եպիսկոպոսի հետ 10-ին գեկտ. թ. 2194. մի առարկութիւն արեց յիշեալ բողոքի անհիմ լինելու առթիւ, որ բողոքի հետ որոշուեցաւ կցել

դործին: Ժողովականները միաձայն հաստատեցին պ. Յարութիւնեանի յայտարարութեան ճշմարտութիւնը:

Այնուհետեւ Մ. Աթոռի միաբանութեան պատգամաւոր 8. Բարգուղիմէոս եպիսկոպոսը ներկայացրեց ժողովին մի գրաւոր յայտարարութիւն, որի պատճէնը առեւեց պ. Պրոկուրօրին, և խնդրեց կարգալ այն ի գիտութիւն ժողովականների, բայց ժողովը մերժեց լոել նորա յայտարարութիւնը ևս որոշուեցաւ կցել գործին:

Պատգամաւոր 8. Բարգէն վարդապետը յայտնեց, թէ պէտք է պատճառաբանելով մերժել 28 հեռացած անդամների առաջկութիւնները, պատգամաւորների լիազօրութիւնների մասին: Բայց պ. Պրոկուրօրը բացատրեց, թէ այդ լիազօրութիւնները քննուած և կանոնաւոր են ճանաչուած Սինօդի կողմից, ոչին այս խնդրում պատկանում է վախճանական որոշման իրաւունքը, ուստի և այս խնդրիը քննութեան առնելու կարիք չկայ և բողոքը պէտք է միայն կցել գործին:

Մորանից յետոյ ժողովը ձեռնարկեց չորս աւագ թեկնածուների ընտրութեան ամենայն Հայոց Ծայրադոյն Պատրիարք Կաթողիկոսի պաշտօնի համար:

Բայց քուէարկութեամբ, սահմանուած կարդով, ընտըսնեցան:

8. Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեան 86 ձայնով.

8. Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեան 84 \*

8. Մեսրոպ եպիսկոպոս Տէր Մովսէսեան 78 \*

8. Մտեփաննոս արքեպ. Յովկակիմեան 63 \*

Այս արդիւնքի մասին պատշաճաւոր արձանագրութիւն կազմելուց յետոյ 8. Տեղակալը փակեց նիստը և յայտնեց, որ ամսիս 13-ին տեղի կունենայ ժողովի յաջորդ գումարումը:

Հետեւ օրը դեկտեմբերի 13-ին, ժամը 10 ին, սահմանուած կարդով տեղի ունեցաւ ժողովի յաջորդ գումարումը: Ժողովին մասնակցում էին 80 անդամ 89 ձայնով:

Տէր նախագահը բանալով ժողովը, առաջարկեց, ա-

տեհագալովին կարդալ նախընթաց գումարումների արձանաւ գրութիւնը: որ ընդունուեց մի քանի փոփոխութիւններով: Ապա քուէարկութեան գուուեց չորս թեկնածուներից աւագագոյն Տ. Գէորգը արքեպիսկոպոսը—որի քուէարկութեան ժամանակ նախագահում էր Տ. Յակովը եպիսկոպոսը. Տ. Գէորգ արքեպիսկոպոսը ստացաւ գաղտնի քուէարկութեամբ յիսուն ութ ընտրողական և երեսուն ոչ ընտրողական քուէ: Յետոյ քուէարկութեց Տ. Գէորգ արքեպիսկոպոսի նախագահութեամբ հետեւեալ թեկնածու Տ. Եղիշէ արքեպիսկոպոսը, որ ստացաւ յիսուն և եօթն ընտրողական և երեսուն և երկու ոչ ընտրողական քուէ:—Տ. Եղիշէ արքեպիսկոպոսի քուէտուփի ընտրողական արկղից գուրս եկաւ Հայերէն գրուած մի փոքր տոմսակ «աշխարհական պատգամաւորմը» ստորագրութեամբ ուղղուած պ. Պրօկուրօրին: Ժողովը չկամեցաւ կարդալ այդ տոմսակը, որ յանձնուեցաւ իրեն պ. Պրօկուրօրին:

Երրորդ թեկնածու Տ. Մեսրոպ եպիսկոպոսը ստացաւ երեսուն և ինն ընտրողական և քառասուն և ինն ոչ ընտրողական քուէ: Իսկ չորրորդ թեկնածու Տ. Մտեփաննոս արքեպիսկոպոսը ստացաւ երեսուն և ութ ընտրողական և յիսուն և մի ոչ ընտրողական քուէ:

Ընտրութեան այդ արդիւնքը պաշտօնապէս յայտարարուեց ի լուր ժողովականների և յայտնուեց, որ ըստ այդմ ամենայն Հայոց Պատրիարք—Կաթուղիկոսի աստիճանի համար ձայների մեծամասնութեամբ թեկնածուներ են ընտրուած Տ. Գէորգ արքեպիսկոպոսը և Տ. Եղիշէ արքեպիսկոպոսը: Այդ մասին կազմուեց պատշաճ արձանագրութիւն Հայերէն և ուսւերէն, որ և ստորագրուեց բոլոր ժողովականների կողմից:

Ժողովը իւր զբաղմունքները աւարտելուց յետոյ միաձայն որոշմամբ հեռագրով գիմեց Կովկասի Տ. Փոխարքային, խնդրելով արկանել առ ոստ ՆՈՐԻՆ ԿՈՅԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ Ռուսահպատակ հոգեուրական և աշխարհական պատգամաւորների ամենահպատակ հաւատարմութեան և օտար երկրներից եկած բոլոր պատգամաւորների ան-

հուն երախտագիտութեան զգացմանըները, որպէս Օգոստափառ Հովանաւորի Հայաստանեաց եկեղեցու:

Ենորհակալութեան հետագիր ուղարկուեցաւ ժողովի կողմից միաձայն որոշմամբ նաև Կովկասի Տ. Փոխարքային իւր բարեացակամութեան համար գէպի Հայաստանեաց եկեղեցին և հայ ժողովութեց:

Ենորհակալութիւն յայտնուեց Բարձրագոյն Խիստութեան ներկայացուցիչ Կոմի-Ցիրենակենին, նախագահ Տ. Գէորգ արքեպիսկոպոսին և Պրօկուրօր պ. Մելիք Օհաննանեանին իրանց աշխատանաց և ժողովի զբաղմունքները օրինակելի կարգով առաջ տանելու համար:

Սահմանեցին. Տ. Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանցին և Տ. Եղիշէ արքեպիսկոպոս Պաւրեանին ճանաչել ամենայն Հայոց Կաթուղիկոսական թեկնածուներ և յանձնարարել Տ. Եփրեմ եպիսկոպոս, պ. Սամանն Յարութիւննեան և պ. Յակովը Միքայէլեան պատգամաւորներին, անձամբ զեկուցանել Կովկասի Տ. Փոխարքային ընտրութեան արդիւնքը և ներկայացնել՝ Նորին Պայծառափայլութեան ընտրական կարեսը թղթերն ի պատշաճ տնօրէնութիւն, համաձայն Խ1 հատ. 1 մասի 1125 յօդ. հրատ. 1896 և Կովկ. կառավարութեան կանոն 21 յօդ. (Խ հատ. ըստ շարուն, 1906 ամի):

(Ստորագրութիւններ):

Այսուհեան Տ. Փոխարքայի, անունով իմբագրուեցին երկու հեռագրեր, առաջնորդ ժողովը խնդրում էր Տ. Փոխարքային Համազգային ժողովի հաւատարիմ հպատակութեան և երախտագիտութեան զգացմաների արտայայտչը լինել առ Թագաւոր Կայսրն որպէս առ Վեհագոյն հովանաւորն հայ եկեղեցու և ազգի: Երկրորդով ժողովը խորին շնորհակալութիւն և երախտագիտութիւն էր յայտնում Տ. Փոխարքային որպէս հայ եկեղեցու և ազգի բարեացակամի:

Ժողովը շնորհակալութիւն յայտնեց ժողովի նախագահ Տ. Գէորգ արքեպիսկոպոսին, բարձր կառավարութեան

ներկայացուցիչ, Երևանի նահանգապետ և Բարձրադադայն  
Դրան հօֆմէցսար գրաֆ. Վ. Ֆ. Տիգենհառվէնին, և Սի-  
նողի պրօկուրօր Պ. Փ. Կ. Օհանջանեանցին, որոնց շնոր-  
հիւ ժողովները շարունակուեցին ամենայն կանոնաւորու-  
թեամբ:

Նախագահ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը Համազպացին  
ժողովը փակեց ժամը 3<sup>1</sup> 2<sup>2</sup> ին. պահպանիչով: Հնչեցին  
զանգակները և հոգհորականութիւնը ո. Իջման Անդանի  
առաջ Թագաւորի կենգանութեան, Հայրապետական զաւո-  
զանի պայծառութեան և Հայտատանեաց եկեղեցու պէտքը  
լցնելու համար երգեց օրհներգ — «Թագաւոր իւսուց» շա-  
րականը:

Ժողովի նախագահ և առաջին ընտրեալ Տ. Գէորգ  
արքեպիսկոպոսի առաջընթացնութեամբ ժողովականները  
դուրս եկան Տաճարից: Ահազին բազմութիւն էր խանուել  
Տաճարի շուրջը. և բոլորը մասնին, իւրաքանչիւրը իւր  
հասկացողութեամբ, ազօթում էր առ Աստուած և առամ.

«Միշտ անշանժ պահեաւ զաթոռ Հայկացնեայք»:

---

Թուշքից Հայոց պատրիարք Ամեն. Տ. Յովհաննէս  
Արքեպիսկոպոսը ու զգելէ հետեւեալ հեռագիրը առ Տ. Գէորգ  
արքեպիսկոպոս

“Կը շնորհաւորեմ ի զիմաց ալլին զՁեր Սլր-  
ըութիւն եւ յաջողութիւն կը մաղթեմ ի բոլոր  
սրաէ,,:

Ստացուեր են շնորհաւորութեան և այլ բազմութիւ  
հեռագրեր. Առաստանի և առատահմանի զանազան  
հաստատութիւններից ու անձերից:





MAL008424

ԱՆ ՀԱՅԱԳԻՒԹՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

